ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«ՌԵԳՈ ԻՆՇՈՒՐԱՆՍ» Ապահովագրական ՓԲԸ-ի Խորհրդի
«20» ապրիլի 2023թ. որոշմամբ
Խորհրդի Նախագահ՝

Գ. Զաքարյան _____
ստորագրություն

Ուժի մեջ է «01» մայիսի 2023 թվականից

ReGo INSURANCE

«ՌԵԳՈ ԻՆՇՈՒՐԱՆՍ»
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՊԱՅՄԱՆՆԵՐ

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԻ ՀՐԴԵՀԻՑ, ԲՆԱԿԱՆ ԱՂԵՏՆԵՐԻՑ ԵՎ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑՎԱԾ ԱՅԼ ՎՆԱՍՆԵՐԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ – 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ 3
2. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ 3
3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԸ 5
4. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԸ 5
5. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ 8
6. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ 25
7. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ 26
8. ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ 27
9. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ/ ՎԿԱՅԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ԴԱԴԱՐՈՒՄԸ 30
10. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ/ ՎԿԱՅԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԻ ՄԵԾԱՑՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ 34
11. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 35
12. ՎՆԱՍԻ ՉԱՓԻ ՈՐՈՇՄԱՆ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ 41
13. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ ՄԱԺՈՐ) 44
14. ԿՐԿՆԱԿԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ 45
15. ՍՈՒԲՐՈԳԱՑԻԱ 45
16. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ 46

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն պայմանները (այսուհետ՝ Պայմաններ) մշակված են համաձայն Հայաստանի Հանրապետության (ՀՀ) Քաղաքացիական օրենսգրքի, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի և համապատասխանում են ՀՀ Կենտրոնական Բանկի (ԿԲ) կողմից «ՌԵԳՈ ԻՆՇՈՒՐԱՆՍ» Ապահովագրական ՓԲԸ տրված ԱՊՈ թիվ 0010 Լիցենզիայի «Հրդեհից և բնական աղետներից ապահովագրության» և «Գույքին հասցված այլ վնասներից ապահովագրության» դասերին:

1.2. ՀՀ օրենսդրության համաձայն և սույն Պայմանների հիման վրա «ՌԵԳՈ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ն իրավաբանական անձանց, ինչպես նաև անհատ ձեռնարկատերերի և գործունակ ֆիզիկական անձանց հետ (Կողմեր) կնքում է գույքի ապահովագրության պայմանագրեր/վկայագրեր:

1.3. Սույն Պայմանների հիման վրա կարող են մշակվել ապահովագրական ծրագրեր (պրոդուկտներ):

1.4. Սույն Պայմանների հայերեն և ռուսերեն տեքստերում հակասություններ առաջանալու դեպքում գերակայում է հայերեն տեքստը:

2. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

2.1. **Ապահովագրող՝** «ՌԵԳՈ ԻՆՇՈՒՐԱՆՍ» Ապահովագրական Փակ Բաժնետիրական Ընկերություն՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան ստեղծված և ՀՀ տարածքում ոչ կյանքի ապահովագրություն իրականացնելու համար լիցենզավորված իրավաբանական անձ:

2.2. **Ապահովադիր՝** Ապահովագրողի հետ ապահովագրության պայմանագիր/վկայագիր կնքած իրավաբանական անձ՝ անկախ կազմակերպչաիրավական ձևից, կամ անհատ ձեռնարկատեր կամ գործունակ ֆիզիկական անձ: Ապահովադիր կարող է հանդիսանալ գույքը սեփականության (տիրապետման, օգտագործման, տնօրինման) իրավունքով տիրապետող, կամ գույքը հավատարմագրված կառավարման, վարձակալության, լիզինգի, գրավ, պահատվության, կոմիսիայի, վաճառքի և այլնի ընդունած անձը:

2.3. **Շահառու՝**Ապահովադրի կողմից նշանակված, ապահովագրության պայմանագրով/վկայագրով ապահովագրական հատուցում ստանալու իրավունք ունեցող ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որն օրենքի, այլ իրավական ակտի հիման վրա ունի ապահովագրված գույքի պահպանման շահ:

2.4. **Ապահովագրության պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր/Վկայագիր)՝** Ապահովադրի և Ապահովագրողի միջև գրավոր համաձայնություն, որի ուժով Ապահովագրողը պարտավորվում է Պայմանագրով/Վկայագրով սահմանված վճարի դիմաց ապահովագրական պատահարի տեղի ունենալու դեպքում հատուցել Ապահովադրին կամ այլ անձին, ում օգտին կնքվել է Պայմանագիրը/Վկայագիրը, տվյալ պատահարի հետևանքով ապահովագրված գույքին պատճառված կամ Ապահովադրի այլ գույքային շահերի հետ կապված վնասը:

2.5. **Ապահովագրության պայմաններ (Պայմաններ)՝** սույն փաստաթղթում շարադրված ապահովագրության պայմանները, որոնց հիման վրա կնքվում է Պայմանագիրը/Վկայագիրը: Պայմանները հանդիսանում են Պայմանագրի/Վկայագրի անբաժանելի մասը:

2.6. **Ապահովագրության դիմում (այսուհետ՝ Դիմում)՝** Ապահովագրողի պահանջով Ապահովադրի կողմից ապահովագրական պատահարի տեղի ունենալու հավանականությունը որոշելու համար էական նշանակություն ունեցող հանգամանքների գրավոր հայտնում: Դիմումը կարող է լրացվել Ապահովագրողի ներկայացուցչի կողմից՝ Ապահովադրի հայտնած տեղեկատվության հիման վրա: Ապահովագրության Դիմումում առկա տեղեկատվության արժանահավատությունը Ապահովադիրը հաստատում է իր ստորագրությամբ: Դիմումը հանդիսանում է Պայմանագրի/Վկայագրի անբաժանելի մասը:

2.7. **Ապահովագրական ռիսկ՝** ենթադրվող իրադարձություն, որի առաջացման համար կնքվում է Պայմանագիր/Վկայագիր: Որպես ապահովագրական ռիսկ դիտարկվող իրադարձությունը պետք է ունենա դրա առաջացման հավանականության և պատահականության նշաններ:

2.8. **Ապահովագրական պատահար՝** Պայմանագրով/Վկայագրով նախատեսված իրադարձություն, որը տեղի ունենալու ուժով Ապահովագրողը պարտավորվում է Ապահովադրին կամ Շահառուին վճարել ապահովագրական հատուցում:

2.9. **Ապահովագրական գումար՝** Պայմանագրով/Վկայագրով սահմանված գումար, որի սահմաններում Ապահովագրողը պարտավորվում է ապահովագրական պատահարի տեղի ունենալու պարագայում, Պայմանագրով/Վկայագրով նախատեսված կարգով վճարել ապահովագրական հատուցում:

2.10. **Ապահովագրավճար՝**ապահովագրության Պայմանագրով/Վկայագրով սահմանված չափով, կարգով և ժամկետներում Ապահովադրի կողմից Ապահովագրողին հնարավոր ապահովագրական հատուցման դիմաց վճարվելիք գումար: Ապահովագրավճարի մասը համարվում է հերթական ապահովագրավճար:

2.11. **Չհատուցվող գումար(ֆրանշիզա)՝** Ապահովադրի մասնակցության չափը վնասի փոխհատուցմանը, որը սահմանվում է Պայմանագրով/Վկայագրով՝ կոնկրետ գումարի կամ ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսի տեսքով: Չհատուցվող գումարը վերաբերվում է յուրաքանչյուր ապահովագրական պատահարին: Չհատուցվող գումարի տեսակներն են՝

1) պայմանական չհատուցվող գումար, որի սահմանման դեպքում Ապահովագրողն ազատվում է փաստացի վնասների կամ կորուստների հատուցման պարտականությունից, եթե այդ վնասը չի գերազանցում կամ հավասար է Պայմանագրով/Վկայագրով նախատեսված չհատուցվող գումարի չափին, և պարտավոր է վճարել հատուցումն ամբողջությամբ, եթե վնասի մեծությունը գերազանցում է չհատուցվող գումարի չափը.

2) ոչ պայմանական չհատուցվող գումար, որի սահմանման դեպքում Ապահովագրողն ազատվում է վնասի որոշակի մասով հատուցում իրականացնելուց՝ անկախ վնասի կամ կորստի ընդհանուր չափից:

2.12. **Ապահովագրականհատուցում՝**ապահովագրական պատահար տեղի ունենալու արդյունքում Ապահովագողի կողմից Պայմանագրի/Վկայագրի հիման վրա Ապահովադրին (Շահառուին) վճարման ենթակա գումար՝ դրամական արտահայտությամբ կամ համարժեք գույքով: Ապահովագրական հատուցման գումարը ոչ մի դեպքում չի կարող գերազանցել ապահովագրական գումարը (հատուցման սահմանաչափը):

2.13. **Հատուցման սահմանաչափ՝** Պայմանագրով/Վկայագրով որևէապահովագրականռիսկի կամ ապահովագրության օբյեկտի համարնախատեսվածապահովագրականհատուցմանգումարիսահման, որըկիրառվումէապահովագրվածամբողջգույքիկամդրամիմասինկատմամբ, մեկապահովագրականպատահարիհաշվարկովկամՊայամանագրի/Վկայագրիողջժամանակահատվածիհամար:

2.14. **Սուբրոգացիա՝**Ապահովադրի վնասը պատճառած անձի նկատմամբ պահանջի իրավունքի անցումը Ապահովագրողին՝ ապահովագրական հատուցում իրականացրած գումարի չափով, որը հատուցվել է ապահովագրական պատահարի հետևանքով:

2.15. **Երրորդ անձինք՝** բոլոր անձինք, բացառությամբ՝

1) Ապահովադրի, Շահառուի,

2) իրենց աշխատանքային պարտականությունների իրականացման ընթացքում Ապահովադրի կամ Շահառուի աշխատակիցների,

3) Ապահովադրի կամ Շահառուի ընտանիքի անդամների, եթե Ապահովադիրը կամ Շահառուն

հանդիսանում են անհատ ձեռնարկատեր կամ ֆիզիկական անձ:

3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԸ

3.1. Սույն Պայմաններով ապահովագրության սուբյեկտներ են հանդիսանում՝ Ապահովագրողը, Ապահովադիրը, Շահառուն:

3.2. Որպես Ապահովագրող հանդես է գալիս «ՌԵԳՈ ԻՆՇՈՒՐԱՆՍ» Ապահովագրական ՓԲԸ-ն, որն ունի ապահովագրություն իրականացնելու լիցենզիա:

3.3. Ապահովադիր է հանդիսանում այն իրավաբանական անձը, անհատ ձեռնարկատերը կամ գործունակ ֆիզիկական անձը, ով Ապահովագրողի հետ կնքել է Պայմանագիր/Վկայագիր:

4. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԸ

4.1. Ապահովագրության օբյեկտ են հանդիսանում Ապահովադրի կամ Շահառուի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող գույքային շահերը, որոնք կապված են ապահովագրված գույքի կորստի, ոչնչացման կամ վնասման հետ:

4.2. Սույն Պայմաններով կարող է ապահովագրվել հետևյալ անշարժ և շարժական գույքը.

1) շենքեր (արտադրական, վարչական, պահեստային, գրասենյակային, առևտրային, հասարակական-մշակութային և հանրային օգտագործման և այլն),

2) կառույցներ (աշտարակներ, կայմեր, բաքեր, կամուրջներ, ճանապարհներ, խողովակաշարեր, էլեկտրահաղորդակցման գծեր և այլն),

3) սարքավորումներ (տուրբիններ, գեներատորներ, տրանսֆորմատորներ, կոմպրեսորներ, պոմպեր, հաստոցներ, մղիչներ, մամլիչներ, այլ մեքենաներ, մեխանիզմներ և սարքավորումներ),

4) էլեկտրոնային սարքավորումներ (հաշվիչ, բժշկական, հեռահաղորդակցման, պատճենահանող, բազմացնող տեխնիկա, էլեկտրոնային ֆոտո, կինո և վիդեոտեխնիկա, էլեկտրոնային չափագրման, օպտիկական սարքեր, հակահրդեհային և անվտանգության համակարգեր և այլն),

5) առանձին փակ տարածքներ (գործարաններ, լաբորատորիաներ, աշխատասենյակներ և այլն),

6) կահույք, գրասենյակային գույք, ինտերիերի առարկաներ, տեխնոլոգիական սարքավորումներ,

7) ապրանքանյութական արժեքներ (հումք, նյութեր, կիսաֆաբրիկատներ, պատրաստի արտադրանք, իրացման ենթակա ապրանքներ և այլն),

8) Պայմանագրում/Վկայագրում նշված այլ գույք, բացառությամբ 4.4 կետում թվարկվածների:

Անշարժ գույք՝ շենքեր, կառույցներ, շենքերում գտնվող փակ տարածքներ, անավարտ շինարարության օբյեկտներ, հողամասեր:

Շարժական գույք՝ սարքավորում, էլեկտրական սարքավորում, կահույք, ինտերիերի առարկաներ, գրասենյակային կահույք, տեխնոլոգիական սարքավորումներ, ապրանքանյութական արժեքներ:

Շենք՝ շինարարության արդյունք, որն իրենից ներկայացնում է ծավալուն շինարարական համակարգ, ունի վերգետնյա և/կամ ստորգետնյա մասեր, ներառում է փակ տարածքներ և նախատեսված է մարդկանց ապրելու և/կամ գործունեության, արտադրության տեղարման, ապրանքների պահպանության կամ կենդանիներ պահելու համար: Շենքի կառուցվածքը ներառում է՝ կոնստրուկտիվ տարրեր, ինժիներական սարքավորումներ, ներքին հարդարանք, արտաքին հարդարանք:

Շենքի կամ կառույցի կոնստրուկտիվ տարրեր՝ կրող կամ պատնեշող գործառույթներ կատարող շինարարական կոնստրուկցիաներ, մասնավորապես՝ հիմք, պատեր, հենասյուներ (սյուներ), հեծաններ, միջնապատեր, ծածկույթներ, տանիք, աստիճաններ, պատնեշներ (բացի դյուրահավաքներից), շենքի կոնստրուկցիայի լուսային բացվածքների ապակեպատումը (պատուհաններ, մուտքի դռները, պատերի և տանիքի ապակե տարրերը), դռներ (բացառությամբ

միջսենյակայինների), մուտքի հարթակներ և այլ նմանատիպ տարրեր:

Շենքի ինժեներական սարքավորումներ՝ շենքի շահագործման համար անհրաժեշտ ներքին հանգույցներ, մասնավորապես՝ ջեռուցման համակարգը, ջրատարի, գազատարի և կոյուղու ներքին ցանցը՝ բոլոր սարքավորումներով, ուժային և լուսավորման էլեկտրատար ներքին համակարգը՝ բոլոր լուսավորման կցամասերով (առանց լամպերի, լապտերների, ջահերի և այդ ցանցին միացված այլ սարքավորումների), ներքին հեռախոսային և ազդանշանային ցանցը, օդափոխման համակարգը և օդափոխիչ սարքավորումները, հրդեհամարման համակարգը, ամբարձիչները և վերելակները, հակակայծակային պաշտպանության սարքերն ու սարքավորումները, ներկառուցված կաթսայատան սարքավորումները (կաթսաներ, ջեռուցման կետեր), ներառյալ դրանց սարքավորումները: Շենքից դուրս տեղակայված և շենքի կոնստրուկտիվ տարրերին ամրակցված սարքավորումները համարվում են ինժեներական, միայն Պայմանագրով/Վկայագրով հատուկ նախատեսված լինելու դեպքում:

Շենքի կամ կառույցի արտաքին հարդարանք՝ շենքի (շինության) դիմային հատվածում տեղակայված և դրա անբաժանելի մասը հանդիսացող բլոկներ, պանելներ, սալիկներ, արտաքին ներկածածկ, երեսպատում, ծեփ, որմնանկար, խճանկար:

Շենքի կամ կառույցի ներքին հարդարանք (փակ տարածքի հարդարանք)՝ հատակի ծածույթ, պատերի ծածույթ (պաստառներ, ներքին ներկածածկույթ, երեսպատում, ծեփ, որմնանկար, խճանկար), առաստաղների ծածկույթ, դյուրահավաք միջնորմներ (այդ թվում գիպսաստվարաթղթե, ապակյա), միջսենյակային դռների կոնստրուկցիաներ:

Կառույց՝շինարարության արդյունք, որն իրենից ներկայացնում է ծավալուն, հարթ կամ գծային շինարարական համակարգ, ունի ցամաքային, վերգետնյա և/կամ ստորգետնյա մասեր, բաղկացած է կրող, իսկ առանձին դեպքերում նաև ցանկապատող շինարարական կոնստրուկցիաներից և նախատեսված է արտադրական գործընթացների կատարման, արտադրանքի պահպանման, մարդկանց ժամանակավոր գտնվելու, մարդկանց և բեռների տեղաշարժի համար:

Փակ տարածք՝ շենքի կամ կառույցի ծավալի մաս, որն ունի որոշակի նշանակություն և սահմանափակված է շինարարական կոնստրուկցիաներով:

Հողամաս-հողի մակերեսի մասը (հողի շերտ), որի սահմանները նկարագրված և հաստատված են ՀՀ գործող օրենսդրության համաձայն:

Ապրանքանյութական արժեքներ (համարժեք հասկացություններ՝ «ԱՆԱ», «ապրանքներ», «ապրանքային պահուստներ»)՝ հումք, նյութեր, կիսաֆաբրիկատներ, պատրաստի արտադրանք, իրացման ապրանքներ:

4.3. Միայն Պայմանագրով/Վկայագրով նախատեսված լինելու դեպքում, գույքի ամբողջական և մանրամասն ցանկի առկայության և ապահովագրական գումարների որոշմամբ, կարող է ապահովագրվել նաև հետևյալ գույքը.

1) կանխիկ գումար՝ ՀՀ դրամով կամ արտարժույթով,
2) բաժնետոմսեր, պարտատոմսեր և այլ արժեթղթեր,
3) մոդելներ, մակետներ, նմուշներ, ձևանմուշներ, ցուցանմուշներ և այլն,
4) թանկարժեք մետաղներ և քարեր,
5) թանկարժեք մետաղներից և քարերից պատրաստված իրեր,
6) գեղանկարներ, նկարներ, քանդակներ, նամականիշերի, մետաղադրամների և արվեստի այլ ստեղծագործությունների հավաքածուներ,
7) համակարգչային և համանման այլ համակարգերի տեղեկատվության (լազերային սկավառակներ, կոշտ կրիչներ և տեղեկատվության այլ կրիչներ) տեխնիկական կրիչներ,
8) շինարարական, գյուղատնտեսական մեքենաներ և սարքավորումներ, կցորդներ, բնակելի վագոն տնակներ, տրանսպորտային միջոցներ, բացառությամբ պետական մարմիններում

գրանցման ենթակա տրանսպորտային միջոցների,

9) կրոնական պաշտամունքի առարկաներ,

10) հողատարածքներ, ներառյալ՝ բերքատու շերտը,

11)շենքերի կամ կառույցների արտաքին մասում ամրացված, մոնտաժված կամ տեղադրված գույք, ներառյալ, բայց չսահմանափակվելով՝կայմերը, ալեհավաքները, օդորակիչները, բաց էլեկտրալարերը, գովազդային ցուցանակները, ցուցատախտակները, պաշտպանիչ դիմակալներ,

12) ապահովագրության տարածքում բաց երկնքի տակ պահվող կամ բաց կառույցների/ծածկերի ներսում պահպանվող շարժական գույքը, նույնիսկ եթե այն պաշտպանված է փափուկ նյութերով (կտավով, թաղանթով, փչովի կոնստրուկցիայով և այլն) կամ գտնվում է բաց կառույցների ներսում,

13) անավարտ շինարարության օբյեկտներ հանդիսացող շենքեր և կառույցներ,

14) շինարարության, մոնտաժման, գործարկման-կարգաբերման աշխատանքների կամ փորձարկումների փուլում գտնվող գույքը,

15) օգտակար հանածոների արդյունահանման համար օգտագործվող գույքը,

16) կապիտալ վերանորոգման կամ այլ պատճառներով դրանք ուղղակի նշանակությամբ օգտագործող անձանց կողմից երկար ժամկետով ազատված շենքերն ու կառույցները:

17) փոխադրման մեջ գտնվող գույքը:

4.4. Բոլոր դեպքերում ապահովագրության ենթակա չեն.

1) ձեռագրերը, նախագծերը, գծագրերը, հաշվապահականևգործառնականայլմատյանները,

2) ծրագրային ապահովումը, համակարգչայինտեխնիկականկրիչներիևնմանատիպհամակարգերիվրապարունակվողտեղեկատվությունը,

3) պայթուցիկ նյութերը, զենքն ու զինամթերքը,

4) գույքը, որն Ապահովադիրը չի տիրապետում սեփականության իրավունքով կամ այլ օրինական հիմքերով,

5) կենդանիները, բույսերը, բազմամյա տնկիները, գյուղատնտեսական մշակաբույսերի բերքը,

6) պիտանելիության կամ իրացման ժամկետանց ապրանքները,

7) վթարային և/կամ խարխուլ, ինչպես նաև կապիտալ վերանորոգման համար ազատված շենքերը, շինությունները և հաղորդակցության միջոցները,

8) գույքը, որը գտնվում է այնպիսի գոտում, որին սպառնում են փլուզումներ, սողանքներ, ջրհեղեղներ, ինչպես նաև որոնք գտնվում են ռազմական գործողությունների կամ տարերային աղետների գոտում,

9) ջրային ռեսուրսները, ընդերքը, ընդերքից դուրս չբերված օգտակար հանածոները,

10) ՀՀ օրենսդրությանը համապատասխան շրջանառությունից հանված կամ սահմանափակ շրջանառության այլ գույքը,

11)անշարժ գույքի սեփականության իրավունքը (տիտղոս):

4.5. Սույն Պայմանների համաձայն ապահովագրված գույքը՝ Պայմանագրում/Վկայագրում նշված և սույն Պայմանների տվյալ բաժնին համապատասխան ապահովագրությունից չբացառված գույքն է: Սույն Պայմանների պայմաններով Ապահովագրողի կողմից ապահովագրության ընդունված գույքն այսուհետ կոչվում է «ապահովագրված գույք»:

4.6. Այն դեպքում, երբ ապահովագրված գույքի յուրաքանչյուր միավոր առանձին չի նշվում Պայմանագրում/Վկայագրում, այլ նշվում են միայն դասակարգման նշաններով առանձնացվող գույքի խմբերը (օրինակ՝ սարքավորումներ, ապրանքային պաշարներ), ապա ապահովագրված գույքի ասելով հասկանում ենք ապահովագրության տարածքում գտնվող բոլոր իրերը, որոնք հանդիսանում

են գույքի տվյալ խմբերի մաս, այդ թվում նրանք, որոնք գոյություն են ունեցել Պայմանագրի/Վկայագրի կնքման պահին, և նրանք, որոնք հետագայում ավելացվել են այդ խմբին: Ընդ որում, ապահովագրությունը տարածվում է Պայմանների սույն կետում նշված այն գույքի վրա, որի նկատմամբ Ապահովադիրը (Շահառուն) օրենքի, այլ իրավական ակտի կամ պայմանագիր հիման վրա ունի դրա պահպանման շահ:

Սույն Պայմանների շրջանակներում ***խարխուլ*** ասելով հասկանում ենք գույքի այնպիսի վիճակը, որի դեպքում նշված գույքը շահագործվել է դրա համար նախատեսված նորմատիվային ժամկետից ավել, և համաձայն գործող նորմերի՝ հավաստագրված փորձագիտական կազմակերպությունների կամ պատկան պետական մարմինների կողմից ճանաչվել է ոչ պիտանի հետագա շահագործման համար:

Սույն Պայմանների շրջանակներում ***վթարային*** ասելով հասկանում ենք շենքի, շինության այնպիսի վիճակը, որը իրավասու պետական մարմինների կողմից ճանաչվել է ոչ պիտանի հետագա շահագործման համար:

5. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ

Սույն Պայմաններով կարող են ապահովագրվել Ապահովադրի (Շահառուի) ՝ ապահովագրված գույքի կորստի, ոչնչացման կամ վնասման հետ կապված գույքային շահերը, հետևյալ ռիսկերի հետևանքով տեղի ունեցած ապահովագրական պատահարներից.

5.1. «ՀՐԴԵՀ, ԿԱՅԾԱԿԻ ՀԱՐՎԱԾ»

Սույն ռիսկի գծով հատուցվում է վնասը, որը հետևանք է.

1) ապահովագրված գույքի վրա կրակի, վառվող ապրանքների, տաք գազերի, հրդեհի ընթացքում բարձր ջերմաստիճանի ազդեցության,

2) ապահովագրված գույքի վրա վթարի հետևանքով արտանետված շիկացած ծուլվածքների (բացառությամբ այդ ծուլվածքները պարունակող անոթների կամ սրվակների) ազդեցության,

3) ապահովագրված գույքի վրա կայծակից առաջացած էլեկտրական պարպման (կայծակի հարվածի) ազդեցության,

4) ապահովագրված գույքի վրա հրդեհի մարման և կանխարգելման նպատակով կիրառվող հրդեհամարման միջոցների ազդեցության,

Սույն Պայմանների շրջանակներում՝ ***հրդեհ*** ասելով հասկացվում է կրակի վառման և պահպանման հատուկ վայրերից դուրս առաջացած կամ այդ վայրերի սահմաններից դուրս եկած, անվերահսկելի այրումը, որն ունակ է ինքնուրույն տարածվելու և նյութական վնաս հասցնելու:

Սույն Պայմանների շրջանակներում՝ ***կայծակի հարված*** ասելով հասկացվում է ամպրոպից առաջացած էլեկտրական պարպումը, որի դեպքում էլեկտրական լիցքն անցնելով ապահովագրված գույքի միջով ապահովագրված գույքի վրա թողնում է ջերմային, մեխանիկական և էլեկտրական ազդեցություն:

5.1.1. «ՀՐԴԵՀ, ԿԱՅԾԱԿԻ ՀԱՐՎԱԾ» ռիսկի գծով ապահովագրական ռիսկ, ապահովագրական պատահար չի համարվում և հատուցման ենթակա չէ վնասը, որը հետևանք է՝

1) ապահովագրված գույքը տեխնոլոգիական գործընթացին համապատասխան (օրինակ՝ չորացում, եփում, արդուկում, թրծում, ծխեցում, տապակում, հալեցում, ջերմային մշակում և այլն) վերամշակելու նպատակով կրակով կամ ջերմությամբ մշակելու հետևանքով,

2) ապահովագրության տարածքից դուրս առաջացած կրակից/հրդեհից առաջացած ծխի ազդեցության,

3) ապահովագրված սարքավորման կամ էլեկտրական սարքավորմանը հասցված վնասը, որն առաջացել է էլեկտրական հոսանքի կարճ միացման, էլեկտրացանցում բեռնվածության, էլեկտրական հոսանքի լարման կամ ուժի բարձրացման ազդեցությամբ՝ առանց հրդեհի առաջացման:

5.2. **«ՋՐԻՑ ՎՆԱՍ»**

Սույն ռիսկի գծով հատուցվում է՝

1) ջրամատակարարման, ջեռուցման, կոյուղու, հակահրդեհային և այլ հիդրավլիկ համակարգերի վթարի (հանկարծակի անսարքության), ինչպես նաև հակահրդեհային համակարգերի հանկարծակի և առանց անհրաժեշտության միանալու հետևանքով ապահովագրված գույքին ջրի կամ գոլորշու հասցրած վնասը,

2) ապահովագրված գույքին Ապահովադրին (Շահառուին) չպատկանող այլ փակ տարածքներից հոսած ջրի հետևանքով պատճառված վնասը:

5.2.1. Շենքերի և շինությունների ապահովագրության ժամանակ հատուցվում են նաև՝

1) ծախսերը՝ կապված անմիջականորեն ապահովագրված շենքերում, շինություններում գտնվող ջրամատակարարման, ջեռուցման, կոյուղու և հակահրդեհային համակարգերի հանկարծակի վնասների վերացման հետ: Այդ դեպքում, խողովակների փոխարինման անհրաժեշտության պարագայում յուրաքանչյուր ապահովագրական պատահարի գծով հատուցվում են խողովակների վնասված հատվածի երկու գծամետրի փոխարինման արժեքը չգերազանցող ծախսերը:

2) ծախսերը՝ կապված սույն Պայմանների 5.2.1 կետի «1)» ենթակետում նշված անմիջականորեն ապահովագրված շենքերում և կառույցներում գտնվող խողովակաշարերի հանկարծակի սառեցումից առաջացած վնասների վերացման հետ: Խողովակների փոխարինման անհրաժեշտության պարագայում յուրաքանչյուր ապահովագրական պատահարի գծով հատուցվում են խողովակների վնասված հատվածի երկու գծամետրի փոխարինման արժեքը չգերազանցող ծախսերը:

5.2.2. «ՋՐԻՑ ՎՆԱՍ» ռիսկի գծով ապահովագրական ռիսկ, ապահովագրական պատահար չի համարվում և հատուցման ենթակա չէ՝

1) Պայմանների 5.2. կետում նշված պատճառներից տարբերվող այլ գործոնների, այդ թվում՝ փակ տարածքների մաքրման, ջրհեղեղների, խորտակման, ողողման կամ ստորգետնյա ջրերի մակարդակի բարձրացման հետևանքով պատճառված վնասը,

2) վնասը, որն հասցվել է ապահովագրված փակ տարածք հեղուկների ներթափանցման հետևանքով, այդ թվում անձրևի, ձյան, կարկուտի և կեղտի՝ չփակված պատուհանների, դռների, ինչպես նաև բաց անցքերի միջոցով, այդ թվում նաև կանխամտածված բացված անցքերի միջոցով, կամ որն ի հայտ է եկել շենքերի, շինության և կառույցների ապամոնտաժման, միջբլոկային/բլոկային ջրամեկուսացման թերությունների, կոնստրուկիցայի խարխուլ կամ թերի (ոչ պիտանի) լինելու հետևանքով,

3) ապահովագրված շենքի կամ տարածքի վերանորոգման, վերակառուցման, վերանախագծման հետևանքով առաջացած վնասը,

4) հատակի մակերևույթից 15 սմ-ից պակաս հեռավորության վրա գտնվող ապրանքների ոչնչացումը կամ վնասումը,

5) փակ տարածքի ներսում երկարատև խոնավության ազդեցության հետևանքով առաջացած վնասը (բորբոս, սունկ և այլն), ինչպես նաև ցանկացած վնաս, որն առաջացել է ջրի երկարատև կամ պարբերական ազդեցության հետևանքով,

6) Ապահովադրի (Շահառուի) կողմից վթարային կամ խարխուլ (ոչ պիտանի) ջրամատակարարման, ջեռուցման, կոյուղու և հակահրդեհային համակարգերի շահագործման, Ապահովադրի (Շահառուի) կողմից այդ համակարգերի շահագործման նորմատիվային ժամկետները խախտելու կամ չպահպանելու հետևանքով առաջացած վնասը,

7) խողովակաշարերին կցված համակարգերի և սարքերի, ներառյալ, բայց չսահմանափակվելով, ծորակների, փականների, բաքերի, լոգարանների, ռադիատորների, ջեռուցման կաթսաների և այլնի, վերանորոգման կամ փոխարինման ծախսերը,

8) ապահովագրված շենքերից և փակ տարածքներից դուրս գտնվող խողովակաշարերի վերանորոգման, փոխարինման կամ ապասառեցման հետ կապված ծախսերը,

9) շենքերից և շինություններից դուրս տեղակայված՝ ջրամատակարարման, ջեռուցման, կոյուղու, հակահրդեհային կամ այլ հիդրավլիկ համակարգերի վթարի կամ խցանման հետևանքով, դրսից շենք կամ շինություն ներհոսած ջրի ազդեցության հետևանքով ապահովագրված գույքին հասցված վնասը, կամ այն դեպքերում, երբ տեղատարափ կոյուղին չի հաղթահարում ջրահեռացումը տեղումների ինտենսիվության պատճառով:

5.2.3. «ՋՐԻՑ ՎՆԱՍ» ռիսկից ապահովագրության դեպքում Ապահովադիրը պարտավոր է՝

1) ապահովագրության տարածքում ապահովել ջրամատակարարման, ջեռուցման, կոյուղու և հակահրդեհային համակարգերի պատշաճ շահագործումը, ինչպես նաև ժամանակին դրանց սպասարկումը և վերանորոգումը,

2) ապահովագրված շենքերը (շինությունները) կապիտալ վերանորոգման կամ այլ նպատակներով ավելի քան 40 օրով ազատելու դեպքում՝ անջատել և ապահովել վերոնշյալ խողովակաշարային համակարգերից ջրի և գոլորշու ժամանկին դատարկելը,

3) շենքերի, շինությունների, կառույցների շահագործման ընդմիջման ընթացքում դատարկել անհատական ջեռուցման համակարգի ջուրը՝ շրջակա օդի ցածր (բացասական) ջերմաստիճանի դեպքում,

4) շենքերի, շինությունների, կառույցների շահագործման դեպքում երբ շրջակա օդի ջերմաստիճանը բացասական է, անհատական ջեռուցման համակարգում կիրառել այնպիսի հեղուկներ, որոնք չեն սառչում շրջակա օդի մինչև 30°C Ցելսիուս բացասական ջերմաստիճանի դեպքում:

5.3. «ՏԱՐԵՐԱՅԻՆ (ԲՆԱԿԱՆ) ԱՂԵՏՆԵՐ»

Սույն ռիսկի գծով հատուցվում է վնասը, որը հետևանք է՝

1) հրաբխի ժայթքման,
2) ջրհեղեղի, հեղեղման,
3) փոթորիկի,հողմի, մրրիկի, պտտահողմի,
4) ցունամիի,
5) սողանքի, գրունտի նստվածքի, փլուզման, քարահոսքի, ձնահոսքի, ցեխահոսքի,
6) կարկուտի:

Հրաբխի ժայթքում՝ հրաբխային գործընթաց, որն ուղեկցվում է հրաբխի խառնարանից շիկացած գազերի, քարերի, մոխրի արտանետմամբ, ինչպես նաև մագմայի արտահոսքով:

Ջրհեղեղ, հեղեղում՝ տարածքի անկանխատեսելի հեղեղումը ջրով՝ ջրային զանգվածի ջրավազանի սովորական սահմաններից դուրս գալու հետևանքով, որն առաջանում է ձյան ինտենսիվ հալոցքի, մեծ քանակությամբ տեղումների, ջրի՝ քամու կողմից քշվելու, սառցե խցանումների, ջրամբարների և ամբարտակների ճեղքմամբ, լեռնային զանգվածների ջրի ակունքներ թափվելու, ինչը խոչընդոտում է ջրի բնականոն հոսքին:

Վարարում՝գետի ջրային ռեժիմի փուլը, որը կարող է բազմիցս կրկնվել տարվա տարբեր եղանակներին, որը բնութագրվում է ջրի ինտենսիվ, սովորաբար՝ մնացորդների և մակարդակների կարճաժամկետ մեծացմամբ, և առաջանում է անձրևներից կամ ջերմացման ժամանակ ձնհալի հետևանքով:

Փոթորիկ՝հանկարծակի, ուժգին, ուղղությունը հաճախ փոխող կարճատև քամի: Քամու արագությունը փոթորիկի ժամանակ գերազանցում է 17,2 մ/վ կամ 62 կմ/ժ (Բոֆորտի սանդղակով 8 կամ ավելի բարձր բալ):

Հողմ՝երկարատև և ուժեղ քամի, որի արագությունը գերազանցում է 17,2 մ/վ կամ 62 կմ/ժ (Բոֆորտի սանդղակով 8 կամ ավելի բարձր բալ):

Մրրիկ՝ երկարատև և ուժգին քամի, որի արագությունը գերազանցում է 35 մ/վ:

Պտտահողմ՝ մթնոլորտային մրրիկ, որն առաջանում է ամպրոպային ամպում և տարածվում է դեպի ներքև, կազմված է արագ պտտվող օդից, խոնավության մասնիկներից, ավազից, փոշուց և այլ մասնիկներից և որի պտտման արագությունը գերազանցում է 50 մ/վ:

Ցունամի՝ մեծ բարձրությամբ ծովային ալիքներ (մինչև մի քանի տասնյակ մետր), որոնք առաջանում են երկրաշարժերի, սողանքների և հրաբխի ժայթքման արդյունքում ծովի հատակի հատվածների տեղաշարժման հետևանքով:

Սողանք՝ լանջից ներքև հողի զանգվածի տեղաշարժ (սահք)՝ սեփական զանգվածի ադեցությամբ:

Գրունտի նստվածք՝ բնական երևույթների արդյունքում գրունտի իջեցում բնական ճաքերի կամ դատարկ հողային տարածությունների մեջ, այդ թվում կարստային կամարների փլուզման, տորֆի մնացորդների այրման արդյունքում և այլն:

Փլուզում, քարահոսք՝ լեռնային ժայռերի հանկարծակի փլուզում՝ կայունության կորստի կամ թուլացման հետևանքով, լեռնային ժայռերից քարերի հոսք:

Ձնահոսք՝ ձյան զանգված, որն ընկնում կամ սահում է լեռնալանջերից ավելի քան 20 մ/վ արագությամբ:

Ցեխահոսք՝ ցեխային կամ ցեխաքարային հոսանքներ, որոնք հանկարծակի առաջանում են առատ տեղումների կամ ինտենսիվ ձնհալքի արդյունքում լեռնային գետերի ակունքներում հեղեղումների պատճառով:

Կարկուտ՝ մթնոլորտային տեղումների տարատեսակ, որն արտահայտվում է երկնքից թափվող տարբեր չափի սառցե գոյացությունների տեսքով:

5.3.1. Ապահովագրողը հատուցում է մերկասառույցի հետևանքով առաջացած վնասը, միայն Պայմանագրով/Վկայագրով նախատեսված լինելու դեպքում:

Մերկասառույց՝ սառույցի շերտ, որն առաջանում է շենքերի և շինությունների բաց հատվածների վրա անձրևի կաթիլների և մառախուղի սառելու հետևանքով:

5.3.2. Սողանքից, գրունտի նստվածքից վնասները հատուցման ենթակա են միայն այն դեպքում, եթե ապահովագրված շենքերի, շինությունների նախագծման, շինարարության և շահագործման ժամանակ պատշաճ կերպով հաշվի են առնվել այդ շենքերի ու շինությունների գտնվելու տեղանքի սեյսմիկ և երկրաբանական պայմանները:

5.3.3. Փոթորկից, հողմից, մրրիկից, պտտահողմից առաջացած վնասները հատուցվում են միայն այն դեպքում, եթե վնաս պատճառած քամու արագությունը գերազանցել է 62 կմ/ժ (17,2 մ/վ), որը հաստատվում է ՀՀ հիդրոօդերևութաբանական կենտրոնի համապատասխան հաստատությունների տեղեկանքով:

5.3.4. Պայմանագրով/Վկայագրով հատուկ նախատեսված լինելու դեպքում, Ապահովագրողը հատուցում է յուրաքանչյուրը 1,5ք/մ-ից ավելի չափ ունեցող ցուցափեղկերի, ապակե պատերի վիտրաժների, պատուհանների և դռների ապակիների, ինչպես նաև պատուհանների և դռների շրջանակների վնասումը կամ ոչնչացումը, որոնց մեջ ամրացված են այդպիսի ապակիներ:

5.3.5. «ՏԱՐԵՐԱՅԻՆ (ԲՆԱԿԱՆ) ԱՂԵՏՆԵՐ» ռիսկով ապահովագրական ռիսկ, ապահովագրական պատահար չի համարվում և հատուցման ենթակա չէ վնասը, որը հետևանք է.

1) փլուզման, քարահոսքի, սողանքի, կամ գրունտի նստելու, որոնք առաջացել են ապահովագրության տարածքում կամ անմիջական հարևանությամբ պայթեցման աշխատանքների, օգտակար հանածոների արդյունահանման կամ մշակման, շինմոնտաժային կամ հողային աշխատանքների իրականացման, խոռոչների լցման, գրունտի դուրսբերման, գրունտի նստեցման,

գրունտի վրա դինամիկ ազդեցության (վիբրացիա), գրունտի սառեցման և հալեցման, հողի մերձափնյա և գետային էրոզիայի, հողերի արտահոսքի, ստորգետնյա ջրերի ազդեցության, աղբահանության, շենքերի, շինության և կառույցների ապամոնտաժման,

2) ապահովագրված փակ տարածքներ շենքերի, շինությունների կամ կառույցների միջբլոկային/բլոկային ջրամեկուսացման թերությունների պատճառով, չփակված պատուհաններով, դռներով և անցքերով՝ անձրևի, ձյան, որոտի, կեղտի ներթափանցման, եթե այդպիսի անցքերը չեն առաջացել փոթորկի, հողմի, մրրիկի կամ պտտահողմի հետևանքով,

3) ջրի ազդեցության, եթե դա հետևանք չէ սույն Պայմանների 5.3 կետում նշված իրադարձությունների որևէ մեկի, այդ թվում նաև գույքի վնասը անձրևաջրից, սառույցի հալոցքից, ստորգետնյա ջրերի բարձրացումից, տանիքի և պատերի ներհոսքից և այլն,

4) ապահովագրված շենքերի, շինությունների խարխուլ լինելու, ինչպես նաև այն շենքերի, շինությունների և կառույցների խարխուլ լինելու, որտեղ գտնվում է ապահովագրված գույքը,

5) շենքի կամ կառույցի նստեցման,

Շենքի կամ կառույցի նստեցում շենքի կամ կառույցի հիմքի դեֆորմացիա, որը չի զուգորդվում գրունտի կառուցվածքի փոփոխությամբ:Առաջանում է գրունտի խտացումից և գրունտի ավելորդ ջրի դուրս մղումից,

6) ապահովագրված շենքի, շինության կամ կառույցի տանիքին հասցված վնասը, եթե տանիքի ծածկը պոլիկարբոնատի կամ ասբոցեմանտային նյութերից է, ինչպես նաև, եթե պատճառված վնասի հետևանքով անհնարին չի դարձել տանիքի հետագա նպատակային օգտագործումը:

5.3.6. Անավարտ/կիսակառույց, Ապահովադրի (Շահառուի) կամ դրանք ուղղակի նշանակությամբ շահագործող այլ անձանց կողմից կապիտալ վերանորոգման համար կամ այլ պատճառներով երկար ժամկետով ազատված շենքերը, շինությունները և/կամ կառույցները «Տարերային աղետներ» ռիսկի գծով ապահովագրության չեն ընդունվում:

Ապահովադիրը պարտավոր է անհապաղ տեղեկացնել Ապահովագրողին ապահովագրված շենքերի, շինությունների կապիտալ վերանորոգում իրականացնելու կամ դրանք այլ պատճառներով ավելի քան 40 օր ժամկետով ազատելու մասին:

5.4. «ԿՈՏՐԱՆՔՈՎ ԳՈՂՈՒԹՅՈՒՆ,ԿՈՂՈՊՈՒՏ, ԱՎԱԶԱԿՈՒԹՅՈՒՆ»

Սույն ռիսկով հատուցման ենթակա է ապահովագրված գույքին հասցված վնասը, որը հետևանք է.

1) կոտրանքով գողության,

2) կողոպուտի,

3) ավազակության:

5.4.1. Սույն Պայմանների շրջանակներում ***կոտրանքով գողություն*** ասելով հասկացվում էապահովագրված գույքի գաղտնի հափշտակությունը, այսինքն գույքի ապօրինի անհատույց առգրավումը՝ կապված երրորդ անձի փակ տարածք կամ ապահովագրության տարածքի սահմաններում գտնվող այլ փակ պահեստարանապօրինի մուտք գործելու հետ,բացառապես հետևյալ ճանապարհով.

1) դռները, պատուհանները կամ փակ տարածքների և շենքերի կոնստրուկտիվ տարրերը կոտրելով/ճեղքելով՝ կեռիկների, կեղծ բանալիների կամ այլ տեխնիկական միջոցների օգտագործմամբ,

Կեղծ են համարվում այն բանալիները, որոնք պատրաստվել են բնօրինակ բանալիներին տիրապետելու իրավունք չունեցող անձանց պատվերով կամ իմացությամբ:

Ապահովագրության տարածքից գույքի անհետացման փաստը միայն բավարար չէ կեղծ բանալիների կիրառման փաստը ապացուցելու համար:

Կեռիկների, կեղծ բանալիների և այլ տեխնիկական միջոցների կիրառման հաստատում է

համարվում իրավասու (իրավապահ) մարմինների պաշտոնական եզրակացությունը:

2) կոտրելով ապահովագրության փակ տարածքի սահմաններում գտնվող առարկաները, որոնք օգտագործվել են որպես գույքի պահեստարաններ, կամ բացելով դրանք՝ կեռիկների, կեղծ բանալիների կամ այլ գործիքների միջոցներով,

Այն փակ տարածքներում, որոնք բացի Ապահովադրից օգտագործվում են նաև երրորդ անձանց կողմից՝ ծառայողական կամ տնտեսական նպատակներով, ապահովագրությունը գործում է միայն այն պայմանով, եթե դա հատուկ նախատեսված է Պայմանագրով/Վկայագրով:

3) հափշտակելով առարկաներ փակ տարածքներից, ուր մինչ այդ երրորդ անձը մուտք է գործել է սովորական ճանապարհով, և մնացել այնտեղ գաղտնի մինչև դրա փակվելը, իսկ դուրս գալուց օգտագործել է 5.4.1. (1) կետի միջոցները, կամ հափշտակելով փակ տարածքներից առարկաներ հատուկ սարքերի և հարմարանքների գործադրմամբ՝ առանց այդպիսի փակ տարածքներ մուտք գործելու:

4) վնասելով շինության կոնստրուկտիվ տարրերը (պատերը, հատակը, առաստաղը, տանիքը, դռները, պատուհանները, այդ թվում ապակիները կոտրելով),

5.4.2. Միայն Պայմանագրով/Վկայագրով հատուկ նախատեսված լինելու դեպքում, այն գույքի մասով, որն իր գործառնական նշանակությամբ պայմանավորված տեղակայված է փակ տարածքների սահմաններից դուրս (օրինակ՝ էլեկտրահաղորդալարեր, կապի գծեր, ալեհավաքներ), կոտրանքով գողությունը նույնպես համարվում է ապահովագրված գույքի գաղտնի հափշտակություն՝ առանց ապահովագրված փակ տարածք ներխուժելու, բայց իրականացվել է երրորդ անձի կողմից ամրացման տարրերի ապամոնտաժի, վնասման կամ կոնստրուկցիայի տարրերի վնասման ճանապարհով:

5.4.3. Սույն Պայմանների շրջանակներում կողոպուտ ասելով հասկացվում է ուրիշի գույքի բացահայտ հափշտակությունը, որը զուգորդվել է անձի կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով, և իրականացվել է ապահովագրության տարածքում:

5.4.4. Սույն Պայմանների շրջանակներում ավազակություն ասելով հասկացվում է ապահովագրված գույքի հափշտակությունը, որն իրականացվել է հետևյալ ճանապարհով.

1) Ապահովադրի կամ նրա մոտ աշխատող անձանց նկատմամբ բռնության գործադրմամբ՝ ապահովագրված գույքի հափշտակության վերջիններիս դիմադրությունը ճնշելու համար,

2) Ապահովադրի կամ նրա մոտ աշխատող անձանց կյանքին և առողջությանը սպառնալիքով: Եթե ապահովագրության տարածք է հանդիսանում մի քանի ապահովագրված շենքեր, ապա կողոպուտ է համարվում գույքի հափշտակությունն այն ապահովագրված շենքի տարածքում, որտեղ առաջացել է Ապահովադրի կամ նրա մոտ աշխատող անձանց կյանքի և առողջության նկատմամբ սպառնալիքը:

3) Ապահովադրի կամ նրա մոտ աշխատող անձանց մոտից այդ գույքի հափշտակությունը նրանց անօգնական վիճակում գտնվելու ժամանակ:

Ապահովադրի մոտ աշխատող անձանց են հավասարվում նաև նրա ընտանիքի անդամները, որոնց ժամանակավորապես վստահված է եղել ապահովագրված գույքի նկատմամբ խնամքը:

5.4.5. Միայն Պայմանագրով/Վկայագրով հատուկ նախատեսված լինելու դեպքում Ապահովագրողը հատուցում է այն փակ տարածքների կողպեքների կամ բանալիների փոխարինման հետ կապված ծախսերը, որոնց բանալիները կորել են, բացառությամբ դրամարկղային պահատուփերի և զրահապատ սենյակների կողպեքների և բանալիների փոխարինման հետ կապված ծախսերի:

5.4.6. Միայն Պայմանագրով/Վկայագրով հատուկ նախատեսված լինելու դեպքում

Ապահովագրողը հատուցում է ապահովագրված գույքին կողոպուտի և ավազակության հետևանքով հասցված վնասը, որն առաջացել է ապահովագրության տարածք կամ ապահովագրության տարածքից գույքի տեղափոխման ժամանակ:

5.4.7. «ԿՈՏՐԱՆՔՈՎ ԳՈՂՈՒԹՅՈՒՆ, ԿՈՂՈՊՈՒՏ, ԱՎԱԶԱԿՈՒԹՅՈՒՆ» ռիսկի գծով ապահովագրության դեպքում Ապահովադիրը պարտավոր է՝

1) կատարել գործող օրենսդրությամբ, նորմատիվ իրավական ակտերով կամ Պայմանագրով/Վկայագրով նախատեսված գույքի պաշտպանության և թանկարժեք իրերի պահպանման կանոնները,

2) կանխիկ դրամի, բաժնետոմսերի, պարտատոմսերի, այլ արժեթղթերի, թանկարժեք մետաղների և քարերի ապահովագրության դեպքում պահպանել այդ թանկարժեք գույքը հատուկ պահեստարաններում (զրահապատ փակ տարածքներում, չհրկիզվող պահարաններում, դրամարկղերում),

3) ոչ աշխատանքային ժամերին ապահովել ապահովագրված փակ տարածքների բոլոր մուտքերի, ավտոտնակների, նկուղի դռների, պատուհանների և պահեստարանների կողպումը և անվտանգության ազդանշանային համակարգի միացումը, եթե Պայմանագրում/Վկայագրում, կամ Դիմումում և/կամ նկարագրությունում նշված է դրա առկայության մասին, իսկ թանկարժեք իրերի պահպանման վայրերում ձեռնարկել Պայմանագրով/Վկայագրով կամ նորմատիվ փաստաթղթերով այդպիսի վայրերի անվտանգության մակարդակը ապահովելու համար նախատեսված բոլոր միջոցները:

5.4.8. Կոտրանքով գողությունից, կողոպուտից կամ ավազակությունից ապահովագրության դեպքում ապահովագրական ռիսկի մեծացում է համարվում՝

1) թանկարժեք իրերի պահպանման համար սույն Պայմանների 5.4.7. կետի (2) ենթակետով սահմանված պահեստարանները հանելը կամ փոխելը կամ պահեստարանի վայրի անվտանգության աստիճանի փոփոխությունը,

2) այն շենքերի և շինությունների վերանորոգումը կամ վերակառուցումը, որտեղ գտնվում է ապահովագրված գույքը, ինչպես նաև այդ շենքերի և շինությունների անմիջապես հարակից տարածքների և շենքերի վերանորոգումը, ինչպես նաև այդ շենքերի վրա շինարարական փայտամածների կամ ամբարձիչների տեղադրումը,

3) ապահովագրված գույքը գտնվելու շենքերի կամ շինությունների անմիջապես հարակից (վերևից, ներքևից կամ կողքից) փակ տարածքների երկար ժամկետով (ավելի քան 40 օր անընդմեջ) ազատելը,

4) Ապահովադրի տնտեսական գործունեության դադարեցումը երկար ժամկետով (ավելի քան 40 օր անընդմեջ),

5) Ապահովադրի կողմից ապահովագրված փակ տարածքների կամ պահեստարանների կողպեքների անհապաղ փոխարինմանն ուղղված միջոցների չձեռնարկելը, եթե այդ կողպեքների բանալիներն ավելի վաղ կորել են:

5.4.9. «ԿՈՏՐԱՆՔՈՎ ԳՈՂՈՒԹՅՈՒՆ, ԿՈՂՈՊՈՒՏ, ԱՎԱԶԱԿՈՒԹՅՈՒՆ» ռիսկով ապահովագրական ռիսկ ապահովագրական պատահար չի համարվում և հատուցման ենթակա չէ՝

1) կոտրանքով գողությունը, կողոպուտը, ավազակությունը, որն իրականացվել է Ապահովադրի հետ բնակվող, նրա հետ համատեղ տնտեսություն վարող անձանց կողմից,

2) կոտրանքով գողությունը, կողոպուտը, ավազակությունը, որն իրականացվել է Ապահովադրի մոտ աշխատող անձանց, կամ շենքերի վարձակալների կողմից, որոնցում գտնվում է ապահովագրված գույքը,

3) վարձակալության, լիզինգի, վարձույթի հանձնված ապահովագրված գույքի չվերադարձնելը

Ապահովադրին,

4) ապահովագրված գույքի պակասորդը, անհետանալը, կորուստը, որը տեղի է ունեցել կոտրանքով գողությունից, կողոպուտից, ավազակությունից տարբերվող այլ եղանակով,

5) թանկարժեք գույքի (կանխիկ դրամի, բաժնետոմսերի, պարտատոմսերի, այլ արժեթղթերի, թանկարժեք քարերի և մետաղների) կոտրանքով գողությունը, կողոպուտը, ավազակությունը, որը կոտրանքով գողության, կողոպուտի կամ ավազակության պահին գտնվել է Պայմանագրում/Վկայագրում նշված հատուկ պահեստարաններից դուրս,

6) կոտրանքով գողությունը, որը տեղի է ունեցել ապահովագրված օբյեկտի անվտանգության ազդանշանային համակարգի անջատված լինելու կամ անսարքության պայմաններում, եթե Պայմանագրով/Վկայագրով նախատեսված է ապահովագրության օբյեկտում անվտանգության ազդանշանային համակարգի տեղադրումն ու կիրառումը,

7) վնասը, որն առաջացել է կոտրանքով գողության, կողոպուտի, ավազակության իրականացման կամ դրա փորձի ժամանակ տեղի ունեցած պայթյունի կամ հրդեհի հետևանքով:

5.5. «ԵՐՐՈՐԴ ԱՆՁԱՆՑ ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

Սույն ռիսկի գծով հատուցվում է երրորդ անձանց այն հակաօրինական գործողությունների հետևանքով ապահովագրված գույքին պատճառված վնասը, որոնք ՀՀ գործող վարչական կամ քրեական օրենսդրության համաձայն որակվում են որպես՝

-գույքի դիտավորությամբ (կանխամտածված) ոչնչացում կամ վնասում,

-խուլիգանություն,

-վանդալիզմ:

5.5.1. Սույն ռիսկի գծով Ապահովագրողը հատուցում է նաև կոտրանքով գողության հետևանքով առաջացած ապահովագրված շենքի կոնստրուկտիվ տարրերին պատճառված (պատեր, առաստաղ, հատակ, տանիք և այլն) վնասները վերացնելու հետ կապված ծախսերը:

5.5.2. «ԵՐՐՈՐԴ ԱՆՁԱՆՑ ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ռիսկի գծով ապահովագրական ռիսկ, ապահովագրական պատահար չի համարվում և հատուցման ենթակա չեն վնասը, որը հետևանք է.

1) ապահովագրված գույքի հափշտակության, պակասորդի, անհետացման, կորստի կամ անհիմն յուրացման,

2) այն ապահովագրված գույքի նկատմամբ երրորդ անձանց հակաօրինական գործողությունների, որն այդ անձանց Ապահովադրի կողմից փոխանցվել է վարձակալության, լիզինգի, վարձույթի և այլ պայմանագրով,

3) ապահովագրված գույքի վրա նկարելու, նկարների փակցնելու, գրելու, պաստառներ սոսնձելու և այլ նմանատիպ գործողություններ իրականացնելու,

4) ապահովագրված շենքում, ինչպես նաև հարևան շենքերում, շինություններում,կառույցներում իրականացվող վերանորոգման և վերանախագծման հետևանքով (եթե վերանորոգման կամ վերանախագծման անցկացումը նախապես գրավոր չեն համաձայնեցվել Ապահովագրողի հետ)ապահովագրված շենքերի փլուզման, ապահովագրված շենքերում, շինություններում, կառույցներում ճաքերի և այլ թերությունների առաջացման,

5) ապահովագրության տարածքում կամ նրա անմիջական մոտակայքում գտնվող հողային կամ շինմոնտաժային աշխատանքների անցկացման, կամ վերակառուցման կամ վերանախագծման աշխատանքների,

6) ցանկացած պատճառով ջերմաստիճանի փոփոխության, էլեկտրաէներգիայի, ջրի, գազի և ջեռուցման մատակարարման խափանման,

7) վարակի, աղտոտման կամ կոռոզիայի,

8) ապակիների կոտրման,

-երրորդ անձանց կողմից գույքի անզգուշությամբ ոչնչացման կամ վնասման, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով/Վկայագրով:

5.6. **«ՊԱՅԹՅՈՒՆ»**

Սույն ռիսկով հատուցման ենթակա է վնասը, որը հետևանք է.

1) շոգեկաթսաների, բաքերի, գազամբարների, գազատարների, խողովակաշարերի, մեքենաների և համանման այլ սարքավորումների պայթյունի,

2) գազի, փոշեգազային խառնուրդի պայթյունի:

Սույն Պայմանների շրջանակներում ***պայթյուն*** ասելով հասկացվում է կարճ ժամանակի ընթացքում սահմանափակ ծավալով մեծ էներգիայի արագ անջատման գործընթացը, որը պայմանավորված է գազերի ընդարձակման հատկությամբ:

Բաքի պայթյուն (շոգեկաթսայի, գազամբարի, գազատարի, խողովակաշարի) է համարվում միայն այն պայթյունը, երբ այդ բաքի պատերը պատռվում են այն աստիճանի, որ հնարավոր է դառնում արտաքին և ներքին ճնշումների հավասարվելը: Եթե այդպիսի բաքի ներսում տեղի է ունենում արագ քիմիական ռեակցիաներով պայթյուն պայմանավորված, ապա բաքին հասցված վնասները ապահովագրության շրջանակներում հատուցվում են նաև այն դեպքում, եթե վերջինիս պատերին պատռվածքներ չեն առաջացել:

Փոշեգազային խառնուրդի պայթյուն է համարվում այնպիսի պայթյունը, երբ սկզբնական խթանիչ ազդակը նպաստում է փոշու (գազի) գրգռմանը, որը հանգեցնում է պայթյունի:

5.6.1. Միայն Պայմանագրով/Վկայագրով հատուկ նախատեսված լինելու դեպքում Ապահովագրողը հատուցում է դինամիտի կամ այլ պայթուցիկ նյութերի պայթյունի հետևանքով հասցված վնասը:

Պայթուցիկ նյութեր են համարվում քիմիական միացությունները կամ մեծ քանակությամբ ջերմության և գազերի արտազատմամբ ուղեկցվող արագ քիմիական ռեակցիայի ունակ նյութերի խառնուրդները, որոնք հատուկ նախատեսված են այս կամ այն եղանակով պայթյուններ իրականացնելու համար:

5.6.2. «ՊԱՅԹՅՈՒՆ» ռիսկով ապահովագրական ռիսկ, ապահովագրական պատահար չի համարվում և հատուցման ենթակա չէ՝

1) ներքին այրման շարժիչներին կամ նմանատիպ մեքենաներին կամ սարքավորումներին՝ այրման խցիկներում տեղի ունեցող պայթյունների հետևանքով հասցված վնասը,

2) վակուումի ազդեցության կամ բաքի ներսում գտնվող գազի լիցքաթափման հետևանքով հասցված վնասը:

5.7. **«ԲԱԽՈՒՄ, ՀԱՐՎԱԾ»**

Սույն ռիսկով հատուցման ենթակա է վնասը, որը հետևանք է.

1) տրանսպորտային միջոցների հետ բախման,

2) կենդանիների կամ թռչունների հետ բախման կամ հարվածի,

3) ծառերիկամայլառարկաներիվայրընկնելու,

4) ձյան կամ սառույցի տանիքից ընկնելու,

5) թռչող սարքերի կամ դրանց մասերի վայր ընկնելու,

6) թռչող սարքերի կողմից արձակված ձայնային ալիքների հարվածի,

7) ինքնագնաց ջրային տրանսպորտային միջոցներով քարշակվող ոչ ինքնագնաց ջրային տրանսպորտային միջոցների կամ ինքնագնաց ջրային ինժեներական կառույցների կուտակումների:

5.7.1. Միայն Պայմանագրով/Վկայագրով հատուկ նախատեսված լինելու դեպքում Ապահովագրողը հատուցում է ապահովագրված գույքին հասցված վնասը, որը հետևանք է բեռնման

և բեռնաթափման աշխատանքների իրականացման:

Սույն Պայմանների շրջանակներում բեռնման և բեռնաթափման աշխատանքներ ասելով հասկացվում է շենքի կամ կառույցի ներսում իրականացվող գույքի տեղաշարժման աշխատանքները՝ դրա հետագա տեղափոխման համար, ինչպես նաև գույքի հետագա պահեստավորման նպատակով գույքը բեռնափոխադրող տրանսպորտային միջոցի բեռնաթափելու աշխատանքները:

5.7.2. «ԲԱԽՈՒՄ, ՀԱՐՎԱԾ»» ռիսկով ապահովագական ռիսկ, ապահովագրական պատահար չի համարվում և հատուցման ենթակա չէ վնասը, որը հետևանք է՝

1) հարվածների և բախումների, որոնց պատճառ են հանդիսացել Ապահովադրին կամ Շահառուին, նրանց ընտանիքների անդամներին, կամ Ապահովադրի և Շահառուի հետ համատեղ բնակվող կամ համատեղ տնտեսություն վարող, Ապահովադրի կամ Շահառուի մոտ աշխատող անձանց կամ ապահովագրված շենքերի կամ շենքերի, որոնցում տեղակայված է ապահովագրված գույքը վարձակալներին պատկանող, ինչպես նաև ժամանակավորապես նրանց շահագործման տակ գտնվող տրանսպորտային միջոցները, կենդանիները կամ թռչող սարքերը,

2) փլուզման, սողանքի, գրունտի նստելու կամ քարահոսքի, որն առաջացել է ապահովագրության տարածքում կամ դրա անմիջապես մոտակայքում պայթեցման աշխատանքների, գրունտի հանման, գրունտի խտեցման, փոսորակների լցման, հողային կամ շինմոնտաժային աշխատանքների, ինչպես նաև օգտակար հանածոների արդյունահանման կամ մշակման հետևանքով,

3) վարակի, աղտոտման կամ կորոզիայի,

4) ապակիների կոտրման,

5) տարերային աղետների, կոտրանքով գողության, կողոպուտի, ավազակության, երրորդ անձանց հակաօրինական գործողությունների:

5.8. «ԱՊԱԿԻՆԵՐԻ ԿՈՏՐՈՒՄ»

Սույն ռիսկով հատուցման ենթակա է շենքի կամ շինության ապակյա տարրերի ջարդվելու (կոտրվելու) հետևանքով պատճառված վնասը:

Սույն ռիսկով կարող են ապահովագրվել շենքերի և շինությունների՝ շրջանակների մեջ դրված կամ հատուկ ամրացման տեղերում մոնտաժված Պայմանագրում/Վկայագրում թվարկված հետևյալ ապակյա տարրերը՝

1) պատուհանների և դռների ապակիները,

2) ցուցափեղկերը,

3) վիտրաժները,

4) դիմապատերի և պատերի ապակյա երեսպատումը,

5) պատերի և տանիքի ապակե տարրերը,

6) ապակյա լուսային գմբեթները,

7) ապակյա կամ ապակուն համանման նյութերից պատրաստված գովազդային վահանակները:

5.8.1. Կողմերի համաձայնությամբ, եթե ապահովագրության պայմանները և հատուցման սահմանաչափը նշված են Պայմանագրում/Վկայագրում, Ապահովագրողը հատուցում է նաև ծախսերը կապված՝

- կոտրված ապակիների ժամանակավոր փոխարինման հետ, եթե կոտրվածին ամբողջությամբ համանմանով անհապաղ փոխարինումը հնարավոր չէ,
- կոտրված ապակիների փոխարինմանը խանգարող առարկաների (շերտավարագույրներ, ճաղավանդակ և այլն) մոնտաժման և ապամոնտաժման հետ,
- շինարարական փայտամածների վարձակալության և մոնտաժման հետ, եթե դրանք անհրաժեշտ են բարձր հարկերում ապակիների փոխարինման համար,
- ապակիների կոտրվելու հետևանքով ոչնչացված ցուցափեղկերի գովազդային ձևավորման

վերականգնման հետ (ներկը, նկարչությունը, փորագրությունը և այլն):

5.8.2. Ապահովադիրը պարտավոր է՝

1) չթույլատրել ապահովագրված ապակիների հալեցումը կամ ապասառեցումը տաքացնող սարքերի միջոցով (եռակցման լամպ, այրիչ, կվարցային լամպ և այլն) կամ տաք ջրով,

2) տեղադրել ջեռուցման սարքերը, սալօջախները կամ լուսային գովազդային սարքերը ապահովագրված ապակիներից 30 սմ ոչ պակաս հեռավորության վրա,

3) տեղեկացնել վարձակալին սույն պարտավորությունների մասին, եթե տարածքը հանձնում է երրորդ անձի՝ ժամանակավոր տիրապետման, օգտագործման կամ տնօրինման:

5.8.3. «ԱՊԱԿԻՆԵՐԻ ԿՈՏՐՈՒՄ» ռիսկով ապահովագրական ռիսկ, ապահովագրական պատահար չի համարվում և հատուցման ենթակա չէ վնասը, որը հետևանք է՝

1) ապահովագրված ապակյա տարրերի հետ աշխատանքի ընթացքում սխալ տեղադրումից կամ տեղակայումից առաջացած ճաքերի, ինչպես նաև ապահովագրված ապակյա տարրերի մոնտաժման, ապամոնտաժման, վերանորոգման կամ տեղափոխման ժամանակ առաջացած ճաքերի,

2) ապակիների հղկված մակերևույթների կամ հայելային ծածկույթների վրա քերծվածքների առաջացման,

3) ապահովագրված ապակիների պատահական կամ միտումնավոր ներկման հետևանքով,

4) ապահովագրված ապակիների հալեցումը կամ ապասառեցումը տաքացնող գործիքների կամ տաք ջրի օգնությամբ,

5) շենքի կամ կառույցի նստեցման,

6) Ապահովադրի կողմից սույն Պայմանների 5.8.2 կետի պահանջները չկատարելու հետևանքով:

5.9. ***Եթե Պայմանագրով/Վկայագրով ուղղակիորեն այլ բան նախատեսված չէ(հատուկ նշված չէ), ապահովագրական ռիսկ, ապահովագրական պատահար չի համարվում և հատուցման ենթակա չէ.***

5.9.1. Վնասը, որն առաջացել է երկրաշարժի հետևանքով: Պայմանագրով/Վկայագրով «ԵՐԿՐԱՇԱՐԺ» ռիսկը որպես ապահովագրական ռիսկ նախատեսված (հատուկ նշված) լինելու դեպքում, այն ունի հետևյալ նշանակությունը.

Երկրաշարժ՝ երկրի ընդերքում տեղի ունեցող բնական գործընթացների հետևանք, որն ուղեկցվում է ստորգետնյա ցնցումներով և երկրակեղևի տատանումներով:

5.9.1.1. Երկրաշարժի հետևանքով առաջացած վնասները հատուցման ենթակա են միայն այն դեպքում, եթե ապահովագրված շենքերի, շինությունների նախագծման, շինարարության և շահագործման ժամանակ պատշաճ կերպով հաշվի են առնվել այդ շենքերի ու շինությունների գտնվելու տեղանքի սեյսմիկ և երկրաբանական պայմանները:

5.9.2. Վնասը, որը առաջացել է երրորդ անձանց այնպիսի գործողությունների հետևանքով, որոնք ՀՀ գործող օրենսդրությամբ որակվում են որպես ահաբեկչություն, դիվերսիա,

5.9.2.1. Պայմանագրով/Վկայագրով «ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅՈՒՆ» և «ԴԻՎԵՐՍԻԱ» ռիսկերը որպես ապահովագրական ռիսկեր նախատեսված (հատուկ նշված) լինելու դեպքում՝ ունեն հետևյալ նշանակությունները.

Ահաբեկչություն՝ այնպիսի գործողություն, որն ուղղված է քաղաքացիական անձի կամ զինված ընդհարման ժամանակ ռազմական գործողություններին ակտիվորեն չմասնակցող անձի մահվանը կամ ծանր մարմնական վնասվածք պատճառելուն կամ դրանց սպառնալիքին, այն դեպքում, երբ այդպիսի գործողության նպատակն իր բնույթով բնակչությանն ահաբեկելը կամ պետական մարմնի կամ միջազգային կազմակերպության կամ պաշտոնատար անձի որոշման ընդունման կամ գործողության կատարման կամ դրանցից ձեռնպահ մնալու վրա ներգործելն է:

Դիվերսիա՝ պետությունը թուլացնելու նպատակով պայթյուններ, հրկիզումներ կամ այլ գործողություններ կատարելը՝ ուղղված մարդկանց զանգվածային ոչնչացմանը, նրանց առողջությանը վնաս պատճառելուն, կազմակերպությունների, կառույցների, հաղորդակցության ճանապարհների կամ միջոցների, կապի միջոցների կամ գույքի ավերմանը կամ վնասմանը, կամ զանգվածային թունավորումներին կամ համաճարակների կամ անասնահամաճարակների տարածմանը:

5.9.3. Էլեկտրական սարքավորումների վթարը,

5.9.3.1. Պայմանագրով/Վկայագրով «ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ ՎԹԱՐ» ռիսկը որպես ապահովագրական ռիսկ հատուկ նախատեսված (հատուկ նշված) լինելու դեպքում հատուցման ենթակա է միայն այն վնասը, որ հետևանք է.

1) ապահովագրված սարքավորման կամ էլեկտրական սարքավորման (կամ էլեկտրացանցին միացված այլ սարքավորման) վրա էլեկտրական հոսանիք ազդեցության (կարճ միացում, էլեկտրացանցում հոսանքի ուժի կամ լարման բարձրացում),

2) ապահովագրված էլեկտրական սարքավորման մեջ կողմնակի առարկաների ներթափանցման, որը պայմանավորված չէ Ապահովադրի, Շահառուի կամ նրանց աշխատակիցների որևէ գործողությունով, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ,

3) ապահովագրված էլեկտրական սարքավորման պատահական վայր ընկնելու, որը պայմանավորված չէ Ապահովադրի, Շահառուի և նրանց աշխատակիցների որևէ գործողությունով, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ,

5.9.3.2. «ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ ՎԹԱՐ» ռիսկի գծով կարող են ապահովագրվել միայն սարքավորումը կամ էլեկտրական սարքավորումը, որոնք գտնվում են սարքին վիճակում: Սարքին վիճակում գտնվող է համարվում այն սարքավորումը, որի մոնտաժը և միացումն ամբողջովին ավարտված են և որը գործարկման և փորձարկման աշխատանքներից հետո ամբողջովին պատրաստ է շահագործման:

5.9.3.3. Եթե դա նախատեսված է սարքավորումներն արտադրողի կողմից և/կամ երաշխիքային սպասարկման պայմաններով, Ապահովադիրը պարտավոր է ապահովագրության ժամկետի համար մասնագիտացված կազմակերպության հետ կնքել ապահովագրված էլեկտրական սարքավորման տեխնիկական սպասարկման պայմանագիր և Ապահովագրողի պահանջի դեպքում վերջինիս ներկայացնել այդպիսի սպասարկմանը վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը և տեղեկատվությունը:

5.9.3.4. «ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ ՎԹԱՐ» ռիսկի գծով ապահովագրական ռիսկ, ապահովագրական պատահար չի համարվում և հատուցման ենթակա չէ վնասը, որը հետևանք է.

1) նախագծման սխալների, նյութերի թերությունների, կոնստրուկցիաների, արտադրության թերությունների կամ սարքավորման մոնտաժման սխալների,

2) սարքավորումների գործարկման-կարգավորման աշխատանքների և փորձարկումների ժամանակ թույլ տրված սխալների,

3) էլեկտրական սարքավորման մաշվածության, կոռոզիայի, շահագործման և բնականոն աշխատանքի,

4) ջրի,այլ հեղուկների, ինչպես նաև ջրային, թթվային կամ այլ գոլորշիների ազդեցության,

5) ծրագրային ապահովման սխալների, ինչպես նաև կառավարման համակարգ կամ տվյալների փոխանցման համակարգ չարտոնված մուտքի,

6) տեղեկատվության, էլեկտրոնային տվյալների կամ ծրագրային ապահովման վնասման,

7) էսթետիկ բնույթ կրող վնասվածքների (քերծվածքներ, ջարդվածքներ, բծեր, ներկածածկի վնասներ և այլն), ինչպես նաև սարքավորման մասերի, ապահովիչների, սկավառակների,

դիսկետների, մագնիսային ժապավենների, արագամաշ ապակե մասերի վնասման կամ մաշվածության,

8) օդափոխման համակարգի աշխատանքի խափանման, ջերմաստիճանի փոփոխության, հրդեհի կամ ծխահարության,

9) սույն Պայմանների 5.1-5.8 , 5.9.1., 5.9.2., և 5.9.4. կետերում նշված իրադարձություններն ի հայտ գալու:

5.9.4. Սառնարանային սարքավորման մեջ գտնվող ապրանքների վնասումը,

Պայմանագրում/Վկայագրում «ՍԱՌՆԱՐԱՆԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ ՄԵՋ ԳՏՆՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՎՆԱՍՈՒՄ» ռիսկը որպես ապահովագրական ռիսկ հատուկ նախատեսված (հատուկ նշված) լինելու դեպքում հատուցման ենթակա է սահմանված նորմերից սառնարանային սարքավորման ներսում ջերմաստիճանի բարձրացման հետևանքով սառնարանային սարքավորման մեջ գտնվող ապահովագրված ապրանքներին հասցված վնասը, որը հետևանք է.

1) սառնարանային սարքավորման էլեկտրամատակարարման դադարեցման, որը պայմանավորված չէ Ապահովադրի (Շահառուի) որևէ գործողությունով,

2) սառնարանային սարքավորումից սառեցնող գազի արտահոսքի,

3) սառնարանային սարքավորման վնասման կամ ոչնչացման, որը հետևանք է.

- հրդեհի,
- ջրամատակարաման, ջեռուցման, կոյուղու և հակահրդեհային համակարգերի ջրից վնասման,
- տարրերային աղետների (հրաբխի ժայթքում, ջրհեղեղ, հեղեղում, մրրիկ, փոթորիկ, պտտահողմ, ցունամի, սողանք, գրունտի նստվածք, փլուզում, քարահոսքը ձնահոսք, ցեխահոսք, կարկուտ, մերկասառույց, ինչպես նաև երկրաշարժ՝ միայն այն դեպքում, եթե երկրաշարժը որպես ապահովագրական ռիսկ հատուկ նախատեսված է Պայմանագրով/Վկայագրով,
- պայթյունի:

5.9.4.1.1. Միայն Պայմանագրով/Վկայագրով հատուկ նախատեսված լինելու դեպքում՝ Ապահովագրողը հատուցում է նաև սառնարանային սարքավորման վթարի հետևանքով նրա մեջ գտնվող ապրանքներին հասցված վնասումը:

Սույն Պայմանների շրջանակներում ***սառնարանային սարքավորման վթար*** ասելով հասկանում ենք վերջինիս անսպասելի և հանկարծակի շարքից դուրս գալը, վնասումը և ոչնչացումը, որը հետևանք է.

1) սառնարանային սարքավորման վրա կարճ միացման, էլեկտրացանցում հոսանքի ուժի կամ լարման բարձրացման, էլեկտրացանցի ծանրաբեռնվածության կամ կայծակի հարվածի ազդեցության,

2) սառնարանային սարքավորման մասերի թերությունների, կոնստրուկցիայի, պատրաստման սխալների,

3) Ապահովադրի (Շահառուի) անձնակազմի չկանխամտածված և ոչ դիտավորյալ սխալները՝ սառնարանային սարքավորման շահագործման և սպասարկման ժամանակ:

5.9.4.1.2. «ՍԱՌՆԱՐԱՆԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ ՄԵՋ ԳՏՆՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՎՆԱՍՈՒՄ» ռիսկը որպես ապահովագրական ռիսկ նախատեսված (հատուկ նշված) լինելու դեպքում՝

1) վարել սառնարային սարքավորման մեջ գտնվող ապրանքների հաշվառում, հաշվառման փաստաթղթերում ամրագրելով սառնարանային սարքավորման մեջ ապրանքների տեղադրման և հանման ամսաթվերը, ինպես նաև դրանց անվանումները, քանակը և արժեքը,

2) վարել յուրաքանչյուր սառնարանային սարքավորման աշխատանքային ռեժիմի մատյան, որտեղ պետք է նշված լինեն սառեցման ջերմաստիճանները և այլ անհրաժեշտ տվյալներ,

3) ապահովել սառնարանային սարքավորման բնականոն աշխատանքն ու սպասարկումը՝

համաձայն արտադրողի խորհրդատվության, սարքավորման շահագործման կանոնների և վերահսկող մարմինների ցուցումների,

5.9.4.1.3. «ՍԱՌՆԱՐԱՆԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ ՄԵՋ ԳՏՆՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՎՆԱՍՈՒՄ» ռիսկի գծով ապահովագրական ռիսկ, ապահովագրական պատահար չի համարվում և հատուցման ենթակա չէ՝

1) ապահովագրված ապրանքների բնական հատկությունների, քաշի կորստի, նստեցման, չորացման, փչանալու, փտելու, ներքին թերությունների հետևանքով առաջացած վնասը,

2) սխալ պահպանման կամ պահեստավորման, սխալ ջերմային ռեժիմի կիրառման, սառնարանների տարածքի ոչ բավարար օդափոխման, փաթեթավորման վնասման հետևանքով առաջացած վնասը,

3) սառնարանային սարքավորման վերանորոգման իրականացման հետևանքով առաջացած վնասը, եթե դա իրականացվել է առանց Ապահովագրողի հետ նախնական գրավոր համաձայնեցման,

4) 24 ժամից պակաս ժամանակով սառնարանային սարքավորման էլեկտրամատակարարման դադարեցման կամ վերջինիս շարքից դուրս գալու հետևանքով առաջացած վնասը,

5) պիտանելության ժամկետը անցած ապրանքներին հասված վնասը,

6) երրորդ անձանց հակաօրինական գործողությունների հետևանքով հասված վնասը,

5.9.5. ցանկացած բույթի ռազմական գործողությունների, զորաշարժերի, միջոցառումների, քաղաքացիական պատերազմի, հասարակության կողմից տարբեր ընդվզումների, ցանկացած բնույթի ժողովրդական հուզումների, գործադուլների, առգրավման, բռնագրավման, աշխատանքի ընդհատման, ձերբակալության, քաղաքացիական կամ ռազմական իշխանությունների կարգադրությամբ գույքի ոչնչացման կամ վնասման, հարկադիր ազգայնացման, հատուկ կամ արտակարգ դրության հայտարարման հետևանքով առաջացած վնասը:

5.10. Բոլոր դեպքերում ապահովագրական ռիսկ, ապահովագրական պատահար չի համարվում և հատուցման ենթակա չէ՝

5.10.1. միջուկային պայթյունի, ճառագայթման կամ ռադիոակտիվ վարակման հետևանքով առաջացած վնասը,

5.10.2. Ապահովադրի (Շահառուի), ինչպես նաև Ապահովադրի իմացությամբ այն անձի կողմից, ում տիրապետության և օգտագործման տակ է գտնվում ապահովագրված գույքը, ՀՀ գործող օրենսդրությամբ և անվտանգության նորմատիվ ակտերի կանոններով և նորմերով սահմանված հակահրդեհային անվտանգության կանոնների, փակ տարածքների և թանկարժեք ապրանքների պահպանության, աշխատանքների անցկացման անվտանգության կամ համանման այլ նորմերի, եթե այդ խախտումը հանդիսացել է ապահովագրական պատահար ի հայտ գալու անմիջական պատճառ, խախտման կամ չպահմանման հետևանքով ապահովագրված գույքին պատճառված վնասը,

5.10.3. Ապահովադրի (Շահառուի), ինչպես նաև այն անձանց ովքեր գտնվում են աշխատանքային կամ քաղաքացիաիրավական հարաբերությունների մեջ Ապահովադրի (Շահառուի) հետ, կանխամտածված գործողությունների կամ կոպիտ անփութության հետևանքով ի հայտ եկած վնասը,

5.10.4. Ապահովադրի (Շահառուի) բարոյական վնասը, պարապուրդը, բաց թողնված օգուտը, եկամտի կորուստը և այլ անուղղակի վնասները,

5.10.5. ապահովագրված գույքի ինքնահրկիզման, կոռոզիայի, փտման, խմորման, բնական մաշվածության կամ այլ բնական հատկությունների հետևանքով առաջացած վնասը,

5.10.6. էլեկտրական հոսանքի մատակարարման դադարեցման արդյունքում առաջացած վնասը, բացառությամբ այն դեպքերի, երբ «ՍԱՌՆԱՐԱՆԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ ՄԵՋ ԳՏՆՎՈՂ

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՎՆԱՍՈՒՄ» ռիսկը համաձայն սույն Պայմանների 5.9.4.1. կետի ներառված և հատուկ նշված է Պայմանագրում/Վկայագրում,

5.10.7. շենքերի կամ կառույցների կոնստրուկցիաների քանդման, փլուզման հետևանքով ապահովագրված գույքին պատճառված վնասը: Ընդ որում, ապահովագրական պատահար է հանդիսանում և հատուցման ենթակա է շենքի կամ կառույցի կոնստրուկցիայի քանդման, փլուզման հետևանքով առաջացած վնասը, եթե այդպիսի վնասը առաջացել է սույն Պայմանների 5.1.-5.3., 5.6-5.7., 5.9.1. և5.9.2 կետերում թվարկված իրադարձություններն ի հայտ գալու հետևանքով, պայմանով որ նշված կետերում թվարված ռիսկերը ներառված են Պայմանագրում/Վկայագրում որպես ապահովագրական ռիսկ,

5.10.8. Ապահովադրին (Շահառուին) սեփականության իրավունքով կամ այլ օրինական հիմքով չպատկանող գույքին պատճառված վնասը,

5.10.9. երրորդ անձանց հետ Ապահովադրի (Շահառուի) պայմանագրային հարաբերություններից բխող պարտավորությունների հետևանքով առաջացած վնասը,

5.10.10. սույն Պայմանների 4.4. կետում թվարկված՝ ապահովագրությանը ոչ ենթակա գույքին պատճառված վնասը,

5.10.11. միջատների, կրծողների կողմից հասցված վնասը,

5.10.12. Պայմանագրի/Վկայագրի կնքման ժամանակ գոյություն ունեցած ապահովագրված գույքի արատների և թերությունների հետևանքով պատճառված վնասը, որոնք հայտնի էին Ապահովադրին և որոնք հանդիսացել են ապահովագրական պատահար ի հայտ գալու պատճառ,

5.10.13. շինմոնտաժային աշխատանքների անցկացման, ինչպես նաև ապահովագրված գույքի վերակառուցման կամ վերասարքավորման աշխատանքների հետևանքով պատճառված վնասը,

5.10.14. Ապահովադրի (Շահառուի) ՀՀ գործող օրենսդրության խախտմամբ իրականացվող գործունեության հետևանքով ի հայտ եկած վնասը,

5.10.15. ապահովագրված գույքի հափշտակությունը պահպանման միջոցների գործողություններում համակարգչային տեղեկատվության (այդ թվում վնասակար համակարգչային ծրագրերի ազդեցության) մուտքագրման, հեռացման, արգելափակման, փոփոխման, համակարգչային տեղեկատվության կամ բանկային սարքավորումների տեղեկատվական-հեռահաղորդակցության ցանցի մշակման կամ փոխանցման ճանապարհով:

Բանկային սարքավորում կանխիկ դրամի ընդունման և (կամ) տրամադրման բազմաֆունկցիոնալ սարքեր (այդ թվում բանկոմատների, վճարման տերմինալների):

Վնասակար համակարգչային ծրագրեր (համակարգչային վիրուսներ)՝ չարտոնված տեղեկատվության, տվյալների կամ հրահանգների ամբողջություն՝ փոխակերպված համակարգչային համակարգերում և/կամ ցանցերում օգտագործելու համար պիտանի ձևով, և բաղկացուցիչ օպերացիոն համակարգեր կամ ծրագրային ապահովում՝ համակարգչային համակարգերում և/կամ ցանցերում ինքնուրույն տարածվելու հատկություն ունեցող, կամ Ապահովադրի աշխատակից չհանդիսացող որևէ անձի կողմից ստեղծված՝ այն նպատակով, որ համակարգիչը (համակարգչային համակարգը կամ ցանցը) կատարի իր համար չթույլատրված կամ չնախատեսված գործառույթներ,

Տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման հետ կապված ռիսկերի բացառման վերապահում (Վերապահում NMA2928).

5.10.16. Վնասները, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն առաջացել են կապված՝

1) կորստի, փոփոխության կամ փչացման,

կամ

2) համակարգչային համակարգերի, սարքավորումների, ծրագրերի, ծրագրային ապահովման, տվյալների, պահպանման համակարգերի, միկրոչիպերի, ինտեգրված շղթաների կամ

համակարգչային/ոչ համակարգչային նմանատիպ սարքավորումների գործունեության նվազեցման, առկայության կամ գործողության հետ, անկախ այն փաստից՝ դա Ապահովադրի սեփականությունն է, թե ոչ, համարվում են բառառություններ, եթե դրանց պատճառը հետևյալ գործոններից մեկը կամ մի քանիսը չեն՝ հրդեհ, կայծակի հարված, պայթյուն, բախում, հարված, երկրաշարժ, տարերային (բնական) աղետներ, երրորդ անձանց անօրինական գործողություններ:

5.10.17. ցանկացած տեսակի վնասներ, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն, ամբողջությամբ կամ մասնակիորեն կապված են, բխում են կամ բաղկացած են հետևյալից՝

1)Ինտերնետի կամ նմանատիպ համակարգերի օգտագործում կամ սխալ օգտագործում,

2) Տվյալների կամ տեղեկատվության էլեկտրոնային ցանկացած փոխանցում,

3) Ցանկացած համակարգչային վիրուս կամ աշխատանքի նմանատիպ խափանում, «թրթուր», տրամաբանական ռումբ, «Տրոյական ձի» կամ համանման աշխատանքի խախտում / խնդիր,

4) Ինտերնետ հասցեների, Վեբ կայքերի կամ նմանատիպ միջոցների և համակարգերի օգտագործումը կամ սխալ օգտագործումը,

5) Վեբ կայքերում կամ նմանատիպ համակարգերում տեղադրված ցանկացած տվյալ կամ տեղեկատվություն,

6) Տվյալների ցանկացած կորուստ կամ համակարգչային համակարգի վնաս, ներառյալ, բայց չսահմանափակվելով՝ կոշտ սկավառակներ կամ դիսկետներ (եթե միայն նման վնասը կամ կորուստը պայմանավորված չէ երկրաշարժով, հրդեհով, ջրհեղեղով կամ փոթորիկներով),

7) Ինտերնետի և նմանատիպ համակարգերի, ինտերնետային հասցեների, Վեբ կայքերի կամ նմանատիպ համակարգերի գործունեություն կամ վատ գործունեություն (եթե այդ վատ գործունեությունը պայմանավորված չէ երկրաշարժով, հրդեհով, ջրհեղեղով կամ փոթորիկով), կամ

8) Մտավոր սեփականության իրավունքների գիտակցաբար կամ անգիտակցաբար խախտում (ներառյալ, բայց չսահմանափակվելով՝ ապրանքանիշի իրավունքները, հեղինակային իրավունքները, պատճենում, արտոնագրեր):

Սույն Պայմաններին համապատասխան ծածկվող գույքային վնասը նշանակում է գույքին հասցված ֆիզիկական վնաս:

Գույքին հասցված ֆիզիկական վնասը չի ներառում տվյալների կամ համակարգչային ապահովման վնասը, մասնավորապես՝ տվյալների, համակարգչային ապահովման կամ համակարգչային ծրագրերի որևէ վնասակար փոփոխություն, որն առաջացել է բնօրինակ կառուցվածքի հեռացմամբ, աղավաղմամբ, փչացմամբ:

Որպես հետևանք, սույն Պայմանների հիման վրա կնքված Պայմանագրերը/Վկայագրերը չեն ծածկում՝

- Տվյալների կամ համակարգչային ապահովման կորուստ կամ վնաս, մասնավորապես՝ տվյալների, համակարգչային ապահովման կամ համակարգչային ծրագրի ցանկացած վնասակար փոփոխություն՝ առաջացած բնօրինակ կառուցվածքի հեռացման, աղավաղման, փչացման, ինչպես նաև նման կորստի կամ վնասի հետևանքով արտադրության/գործունեության ցանկացած ընդհատման հետևանքով:Սակայն, չնայած այս բացառությանը, տվյալների կամ ծրագրային ապահովման կորուստը կամ վնասումը, որոնք հանդիսանում են ապահովագրված գույքային ռիսկի անմիջական հետևանք, ենթակա են հատուցման:

- Կորուստը կամ վնասը, որը հետևանք է տվյալների, համակարգչային ապահովման կամ համակարգչային ծրագրերի գործունեության խախտման, առկայության, մուտքի ծավալի կամ հասանելիության, ինչպես նաև ցանկացած արտադրության/գործունեության ընդհատման, որը հետևանք է նման կորստի կամ վնասի:

LMA 5394 Վերապահում վարակիչ հիվանդությունների բացառություն.

5.10.18. ցանկացած բնույթի պահանջներ, կորուստներ, վնաս, պատասխանատվություն, պահանջներ, տուգանքներ, ցանկացած բնույթի վատնում կամ ծախսեր, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն և/կամ ամբողջովին, և/կամ մասնակիորեն **Կապված են**, նպաստել են, առաջացել են, բխել են կամ կապված են վարակիչ հիվանդության կամ այլ հիվանդության, կամ վարակիչ հիվանդության կամ այլ հիվանդության վտանգի կամ սպառնալիքի (փաստացի կամ ենթադրվող), կամ առողջության վնաս հասցնելու, կամ մահվան հետ, անկախ որևէ այլ պատճառից կամ իրադարձությունից, որոնք ի հայտ են գալիս միաժամանակ կամ որևէ այլ հաջորդականությամբ:

«**Վարակիչ հիվանդություն»** նշանակում է ցանկացած ինֆեկցիոն, վարակիչ հիվանդություն, կոնտագիոզ հիվանդություն և/կամ այլ հիվանդություն, կամ դրանց ցանկացած մուտացիա կամ փոփոխություն, որոնք՝

a) կարող են առաջանալ ցանկացած նյութից կամ միջնորդից, ներառյալ, բայց չսահմանափակվելով դրանցով՝ վիրուս, մանրէներ, մակաբույծներ, միկրոօրգանիզմներ կամ որևէ այլ պաթոգեն (կենդանի, թե ոչ), և

b) կարող են օրգանիզմից փոխանցվել օրգանիզմին՝ անկախ փոխանցման եղանակից, ներառյալ, բայց չսահմանափակվելով՝ օդակաթիլային ճանապարհով ուղիղ կամ անուղղակի փոխանցումներով, կենսաբանական (մարմնական) հեղուկի միջոցով փոխանցումներով, փոխանցում որևէ մակերևույթ/մակերևույթից կամ օբյեկտ, պինդ մարմին, հեղուկ կամ գազ, կամ օրգանիզմից օրգանիզմ, և

c) որը առաջացնում է կամ կարող է առաջացնել, սպառնալ կամ վնաս պատճառել կամ վտանգել մարդու առողջությանը կամ բարեկեցությանը, ինչպես նաև կարող է վնաս պատճառել կամ վնաս պատճառելու վտանգ հանդիսանալ, վիճակի վատթարացման, արժեքի կորստի, վաճառքի համար պիտանիության կորստի (ապրանքունակությունը) կամ կորցնել նյութական և ոչ նյութական գույքի օգտագործման հնարավորությունը:

Կասկածներից խուսափելու համար **Վարակիչ հիվանդությունը** ներառում է, բայց չի սահմանափակվում, կորոնավիրուսային հիվանդությունը (COVID-19) և դրա ցանկացած մուտացիա կամ փոփոխություն:

«Կապված են» նշանակում է վերագրելի, կապված, ծագող, տակ, բխող, արդյունքում, հետևանքով, որպես հետևանք, նպաստող, պատճառված, ներառող ներգրավող, և ցանկացած այլ տերմին, որը սովորաբար օգտագործվում և/կամ հասկացվում է, որպեսզի արտահայտի կամ նկարագի մի բանը մյուսի հետ հղումը և/կամ կապը, լինի դա ուղղակի կամ անուղղակի:

Կասկածից խուսափելու համար՝

a) ոչ մի այլ նախորդ, զուգահեռ կամ հետագա դրույթ, վերապահում, պայման կամ բացառություն, ներառյալ, բայց չսահմանափակվելով, օրենքում ցանկացած փոփոխություն և/կամ հետագա ընթացքի մասին դրույթ կամ սույն Պայմանների հիման վրա կնքված ապահովագրության Պայմանագրի/Վկայագրի համանման դրույթներ (ներառյալ, բայց չսահմանափակվելով), ցանկացած նախորդ, զուգահեռ կամ հետագա հավանություն և/կամ ցանկացած դրույթ, վերապահում, պայման կամ բացառություն, որը գործում է կամ նախատեսված է սույն Պայմանների հիման վրա կնքված ապահովագրության Պայմանագրով/Վկայագրով,

b) օրենքի կամ ցանկացած նորմատիվ ակտի փոփոխություն (կիրառելի օրենսդրությամբ թույլատրված սահմաններում) պետք է ապահովի սույն Պայմանների հիման վրա կնքված ապահովագրության Պայմանագրի/Վկայագրի ապահովագրություն, ծածկույթ կամ պաշտպանություն, որոնք հակառակ դեպքում կբացառվեին սույն կետով սահմանված բացառության միջոցով:

5.11. Ապահովագրողը ծածկույթ չի տրամադրում և չի կրում պատասխանատվություն

ցանկացած վնասի համար, ինչպես նաև սույն Պայմանների հիման վրա կնքված Պայմանագրերի/Վկայագրերի գծով չի իրականացնում որևէ տեսակի վճարումներ, եթե այդպիսի ծածկույթը, վնասի վճարումը կամ որևէ այլ վճարում հակասում է ՄԱԿ-ի բանաձևերին, առևտրային և տնտեսական պատժամիջոցներին, Եվրոպական միության, Ֆրանսիայի կամ Ամերիկայի Միացյալ Նահանգների օրենսդրական կամ նորմատիվ իրավական ակտերին համապատասխան պատժամիջոցներին, արգելքներին կամ սահմանափակումներին:

5.12. Եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ, ապա սույն կետում նշված ռիսկերով մեկ ապահովագրական պատահար է ճանաչվում ապահովագրված գույքի կորուստը, ոչնչացումը կամ վնասումը, որը տեղի է ունեցել հողմի, փոթորիկի, մրրիկի, ջրհեղեղի, հեղեղման, երկրաշարժի (եթե միայն «Երկրաշարժ» ռիսկը հատուկ նախատեսված է Պայմանագրով/Վկայագրով), ցունամիի, հրաբխի ժայթքման կամ հրաբխային ակտիվության արդյունքում, որը տեղի է ունեցել անընդհատ 72 (յոթանասուներկու) ժամվա ընթացքում:

Ոչ մի առանձին վնաս որևէ ապահովագրված ռիսկից, որը չի համապատասխանում վերը նշված տևողության չափանիշներին կամ մեկ գտնվելու վայրին, չի համարվում ապահովագրական պատահար:

Ապահովադիրը կարող է ընտրել հաջորդական այդպիսի ժամանակահատվածի սկզբի ամսաթվի և ժամ կիզբը, եթե այդպիսի իրադարձության (աղետի) տևողությունը գերազանցում է տվյալ ժամանակահատվածի տևողությունը, Ապահովադիրը կարող է դա ներկայացնել որպես երկու կամ ավելի ապահովագրական պատահար, պայմանով, որ երկու ժամանակահատվածները չեն համընկնում միմյանց հետ, և ժամանակաշրջանի սկզբի ամսաթիվը չի կարող լինել այդ իրադարձության (աղետի) Ապահովադրի առաջին արձանագրված կորստի ամսաթվից և ժամանակից շուտ:

5.13. Սույն Պայմաններով Ապահովադրի գույքը կարող է ապահովագրվել ինչպես սույն Պայմանների 5-րդ կետում թվարկված բոլոր հնարավոր ապահովագրական ռիսկերից, այնպես էլ մեկ ռիսկից կամ այդ ռիսկերի համադրությամբ:

5.14. Միաժամանակ տեղի ունեցած մի քանի իրադարձությունները, որոնց ի հայտ գալու ռիսկից իրականացվում է ապահովագրությունը, համարվում են մեկ ապահովագրական պատահար, եթե այդ իրադարձություններն ունեն միևնույն առաջացման պատճառը:

6. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ

6.1. Գույքը համարվում է ապահովագրված միայն այն տարածքում (տարածքներում, շենքերում, շինություններում կամ հողակտորների վրա), որը նշված է Պայմանագրում/Վկայագրում (ապահովագրության տարածք):

6.2. Կանխիկ դրամի, բաժնետոմսերի, պարտատոմսերի, այլ արժեթղթերի, թանկարժեք քարերի կամ մետաղների ապահովագրության դեպքում, այդ արժեքավոր գույքը համարվում է ապահովագրված, միայն եթե գտնվում է Պայմանագրում/Վկայագրում նշված որոշակի տարածքներում տեղակայված հատուկ պահեստարաններում (զրահապատ տարածքներում, չհրկիզվող պահարաններում, սեյֆերում, դրամարկղերում): Ապահովագրողն Ապահովադրի տրամադրած փաստաթղթերի հիման վրա իրավունք ունի Պայմանագրում/Վկայագրում նշել այդ պահեստարանների անվտանգության տեսակն ու աստիճանը:

6.3. Սառնարանային սարքավորումներում պահպանման ենթակա ապրանքների ապահովագրության դեպքում (սառած կամ սառեցված ապրանքներ և այլն), այդ ապրանքները համարվում են ապահովագրված միայն, եթե դրանք գտնվում են Պայմանագրում/Վկայագրում նշված սառնարանային սարքավորումների մեջ (ապահովագրությանտարածք): Սառնարանային սարքավորման տեսակը նշվում է Պայամանագրի/Վկայագրի մեջ:

6.4. Կոտրանքով գողությունից, կողոպուտից կամ ավազակությունից գույքի ապահովագրության դեպքում ապահովագրության տարածք է համարվում՝

1) կոտրանքով գողությունից ապահովագրության դեպքում՝ Պայմանագրում/Վկայագրում նշված շենքերի փակ տարածքները, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ,

2) կողոպուտից/ավազակությունից ապահովագրության դեպքում, բացի սույն Պայմանների 6.4 կետի 1) ենթակետում նշված ներքին տարածքներից՝ նաև Պայմանագրում/Վկայագրում նշված հողամասերի կամ այն հողակտորների տարածքները, որոնց վրա կառուցված են ապահովագրված շենքերը, եթե այդ հողամասերը պատնեշված են այնպես, որ բացառվում է դրանց օգտագործումը կողմնակի անձանց կողմից:

7. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ

7.1. Ապահովագրական գումարը (հատուցման սահմանաչափը) նշվում է Պայմանագրում/Վկայագրում: Պայմանագրում/Վկայագրում նշված ապահովագրական գումարը (հատուցման սահմանաչափը) չի հանդիսանում Ապահովագրողի և Ապահովադրի միջև գույքի իրական արժեքի (շուկայական արժեք) մասին համաձայնություն:

7.2. Ապահովագրական գումարը կարող է սահմանվել ապահովագրված գույքի յուրաքանչյուր միավորով կամ Պայմանագրում/Վկայագրում նշված օբյեկտների (խմբերի, գույքի դասակարգումների) համակցությամբ, ինչպես նաև կարող է սահմանվել ապահովագրական ռիսկով կամ մեկ ապահովագրական պատահարի համար:

7.3. Ապահովագրական գումարը չի կարող գերազանցել Պայմանագրի/Վկայագրի կնքման պահին գույքի իրական արժեքը (շուկայական արժեք): Կողմերը չեն կարող վիճարկել Պայմանագրով/Վկայագրով սահմանված գույքի շուկայական արժեքը, բացառությամբ այն դեպքերի, երբ ապահովագրական ռիսկի գնահատման իր իրավունքից չօգտված Ապահովագրողը կանխամտածված մոլորոցվել է Ապահովադրի կողմից:

7.4. Եթե Պայմանագրով/Վկայագրով սահմանված ապահովագրական գումարը ցածր է ապահովագրված գույքի իրական արժեքից (ոչ լրիվ ապահովագրություն), ապա Ապահովագրողն ապահովագրական պատահարի տեղի ունենալու դեպքում հատուցում է Ապահովադրին (Շահառուին) հասցված վնասը՝ ապահովագրական գումարի և իրական արժեքի հարաբերությանը համամասնորեն:

Ընդ որում, Պայմանագրով/Վկայագրով կարող է նախատեսվել ապահովագրական հատուցման այլ հաշվարկ՝ իրական արժեքը ապահովագրական գումարին գերազանցելու դեպքերում, բայց, բոլոր դեպքերում, ապահովագրական հատուցումը չի կարող լինել ավել ապահովագրական գումարից և/կամ իրական արժեքից:

7.5. Եթե Պայմանագրում/Վկայագրում նշված ապահովագրական գումարն ավելի բարձր է քան ապահովագրված գույքի իրական արժեքը, ապա Պայմանագիրը/Վկայագիրը համարվում է առոչինչ ապահովագրական գումարի այն մասով, որը գերազանցում է Պայմանագրի/Վկայագրի կնքման պահին գույքի իրական արժեքը: Այս դեպքում ապահովագրավճարի ավել վճարված մասը վերադարձման ենթակա չէ:

7.6. Պայմանագրում/Վկայագրում հատուկ նախատեսված լինելու դեպքում, Պայմանագիրը/Վկայագիրը կարող է կնքվել նաև «Առաջին ռիսկի» պայմանով, երբ իրական արժեքը ապահովագրական գումարը գերազանցելու դեպքերում, ապահովագրական հատուցումը հաշվարկվում է առանց հաշվի առնելու ապահովագրական գումարի և ապահովագրված գույքի իրական (շուկայական) արժեքի համամասնությունը, այսինքն՝իրական վնասի չափով, բայց ոչ ավել քան Պայմանագրով/Վկայագրով սահմանված ապահովագրական գումարը (հատուցման սահմանաչափը) և գույքի իրական (շուկայական) արժեքը:

7.7. Ապահովագրական գումարը կարող է լինել ագրեգատային և ոչ ագրեգատային: Եթե Պայմանագրով/Վկայագրով նշված չէ ապահովագրական գումարի տեսակը, ապա ապահովագրական գումարը համարվում է ագրեգատային:

7.7.1. Եթե Պայմանագրով/Վկայագրով սահմանված է ագրեգատային ապահովագրական գումար, ապա այն հանդիսանում է գումար, որի սահմաններում Ապահովագրողը պարտավորվում է վճարել ապահովագրական հատուցում Պայմանագրի/Վկայագրի գործողության ժամկետի ընթացքում տեղի ունեցած բոլոր ապահովագրական պատահարների հանրագումարով, ընդ որում ապահովագրական գումարը ինքնաշխատ նվազեցվում է հատուցված գումարի չափով: Ապահովագրական գումարի նվազեցումն իրականացվում է ապահովագրական պատահարի տեղի ունենալու օրվանից՝ Ապահովագրողի կողմից տեղի ունեցածը որպես ապահովագրական պատահար ճանաչելու և հետագայում ապահովագրական հատուցում վճարելու դեպքում: Ապահովագրական հատուցումը վճարելուց հետո Պայմանագիրը/Վկայագիրը շարունակում է գործել ապահովագրական գումարի և վճարված ապահովագրական հատուցման տարբերության գումարի չափով:

7.7.2. Եթե Պայմանագրով/Վկայագրով սահմանված է ոչ ագրեգատային ապահովագրական գումար, ապա այդ դեպքում Ապահովագրողը պարտավորվում է վճարել ապահովագրական հատուցում Պայմանագրի/Վկայագրի գործողության ժամկետում տեղի ունեցած յուրաքանչյուր ապահովագրական պատահարի գծով, ընդ որում, ապահովագրական գումարը չի նվազեցվում վճարված ապահովագրական հատուցման գումարի չափով:

7.8. Պայմանագրով/Վկայագրով կարող են սահմանվել Ապահովագրողի կողմից հատուցման սահմանաչափեր՝ Պայմանագրով/Վկայագրով որևէ ապահովագրական ռիսկի համար նախատեսված ապահովագրական հատուցման գումարի սահման, որը կիրառվում է ապահովագրված ամբողջ գույքի կամ դրա մի մասի նկատմամբ, մեկ ապահովագրական պատահարի հաշվարկով կամ ապահովագրության Պայամանագրի/Վկայագրի ողջ ժամանակահատվածի համար:

7.9. Պայմանագրով/Վկայագրով կարող է սահմանվել չհատուցվող գումար (ֆրանշիզա), որը վերաբերվում է յուրաքանչյուր ապահովագրական պատահարին:

Եթե Պայմանագրում/Վկայագրում սահմանված է ֆրանշիզա և նշված չէ ֆրանշիզայի տեսակը (պայմանական կամ ոչ պայմանական), համարվում է, որ Պայմանագրով/Վկայագրով սահմանված է ոչ պայմանական ֆրանշիզա:

7.10. Ապահովագրական գումարը (հատուցման սահմանաչափը) սահմանվում է ՀՀ դրամով: Կողմերի համաձայնությամբ ապահովագրական գումարը կարող է սահմանվել նաև արտարժույթով, որի համարժեքը համարվում է ՀՀ դրամով համապատասխան գումարը (այսուհետ՝ «ապահովագրություն արժութային համարժեքով»):

7.11. Եթե Պայմանագրում/Վկայագրում համապատասխան ռիսկի համար ապահովագրական գումարը սահմանված է արտարժույթով, ապա ապահովագրական պատահար ի հայտ գալու դեպքում կիրառվում է հատուցման օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից տվյալ արտարժույթի համար սահմանված փոխարժեքը: Եթե տվյալ արտարժույթի համար ՀՀ կենտրոնական բանկի փոխարժեքը ապահովագրական հատուցման օրվա դրությամբ 20 % և ավելի բարձր է Պայմանագրի/Վկայագրի կնքման օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի համապատասխան արտարժույթի փոխարժեքից, ապա ապահովագրական հատուցման հաշվարկը կատարվում է Պայամանագրի/Վկայագրի կնքման օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի տվյալ արտարժույթի փոխարժեքին ավելացրած 20%:

8. ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ

8.1. Ապահովագրավճարը հաշվարկվում է ելնելով ապահովագրական գումարից (հատուցման

սահմանաչափից) և Ապահովագրողի կողմից սահմանված ապահովագրական սակագներից՝ հաշվի առնելով գույքի տեսակը, քանակը, ապահովագրության պայմանները, ապահովագրության ժամկետը և ռիսկի աստիճանի վրա ազդող այլ հանգամանքները:

8.2. Ապահովագրավճարը կարող է վճարվել կանխիկ դրամով կամ Ապահովագրողի հաշվարկային հաշվին անկանխիկ փոխանցման ճանապարհով:

8.3. Ապահովագրավճարի վճարումը կատարվում է ՀՀ դրամով:

8.4. Արտարժույթային համարժեքով ապահովագրության դեպքում ապահովագրավճարը կամ դրա հերթական վճարումները հաշվարկման նպատակով կարող են նշվել արտարժույթով: Ապահովագրավճարի վճարումը իրականացվում է ապահովագրավճարի կամ հերթական վճարման օրվա դրությամբ ՀՀ Կենտրոնական Բանկի փոխարժեքով:

Այն դեպքերում, երբ ՀՀ գործող օրենսդրությամբ թույլատրվում է Պայմանագրի/Վկայագրի Կողմերի միջև հաշվարկներ իրականացնել արտարժութով, ապահովագրավճարը (հերթական վճարումը) կարող է սահմանվել, ինչպես նաև Ապահովադրի կողմից վճարվել արտարժույթով:

8.5. Պայմանագրի/Վկայագրի կնքման ժամանակ Ապահովագրողի համաձայնությամբ, Ապահովադրին կարող է տրվել ապահովագրավճարը տարաժամկետ կարգով վճարելու հնարավորություն: Հերթական ապահովագրավճարների չափը և դրանց վճարման ժամկետները սահմանվում են Պայմանագրով/Վկայագրով:

8.6. Եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ, մեկ տարուց պակաս ժամկետով ապահովագրության դեպքում ապահովագրավճարի չափը որոշվում է տարեկան ապահովագրավճարի նկատմամբ կիրառելով հետևյալ տոկոսները՝

Պայմանագրի/Վկայագրի գործողության ժամկետ՝ ամիսներով	Ընդհանուր տարեկան ապահովագրավճարից տոկոս
մինչև 1 ամիս	30%
1-ից մինչև 2 ամիս	40%
2-ից մինչև 3ամիս	50%
3-ից մինչև 4ամիս	60%
4-ից մինչև 5 ամիս	65%
5-ից մինչև 6 ամիս	70%
6-ից մինչև 7ամիս	75%
7-ից մինչև 8 ամիս	80%
8-ից մինչև 9 ամիս	85%
9-ից մինչև 10ամիս	90%
10-ից մինչև 11ամիս	95%

8.7. Եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ, ապա մեկ տարուց պակաս ժամկետով Պայմանագիր/Վկայագիր կնքելու դեպքում ապահովագրավճարը վճարվում է միանվագ՝ մինչև Պայմանագրի/Վկայագրի ուժի մեջ մտնելը:

8.8. Մեկ տարուց ավել ժամկետով ապահովագրության դեպքում Պայմանագրով/Վկայագրով ընդհանուր ապահովագրավճարը սահմանվում է որպես յուրաքանչյուր տարվա

ապահովագրավճարների գումար:

8.9. Ապահովագրավճարը կամ ապահովագրավճարի առաջին մասը Պայմանագրում/Վկայագրով սահմանված ժամկետներում չվճարելու կամ Պայմանագրով/Վկայագրով սահմանված գումարի չափից քիչ վճարելու դեպքում, Պայմանագիրը/Վկայագիրը համարվում է ուժի մեջ չմտած, և այդ ընթացքում տեղի ունեցած իրադարձությունները չեն համարվում ապահովագրական պատահար և Ապահովագրողի մոտ չեն առաջացնում ապահովագրական հատուցում վճարելու պարտավորություն, եթե ապահովագրության Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ:

8.10. Եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ, ապա Պայմանագրով/Վկայագրով սահմանված ժամկետում և չափով Ապահովադրի կողմից հերթական ապահովագրավճարը չվճարելու դեպքում, Ապահովագրողը չի սահմանում լրացուցիչ ժամկետ ապահովագրավճարի վճարման համար, այդ մասին չի ծանուցում Ապահովադրին և միակողմանի լուծում է Պայմանագիրը/Վկայագիրը: Ընդ որում, Պայմանագիրը/Վկայագիրը համարվում է միակողմանի լուծված՝ Պայմանագրում/Վկայագրում հերթական Ապահովագրավճարի վճարման ամսաթվին հաջորդող օրվա ժամը 00:00-ից, և Ապահովագրողը ազատվում է Պայմանագրով/Վկայագրով սահմանված հերթական ապահովագրավճարի վճարման ամսաթվին հաջորդող օրվա ժամը 00:00-ից հետո տեղի ունեցած իրադարձությունների համար ապահովագրական հատուցում իրականացնելու պարտականությունից: Սույն կետի համաձայն Պայմանագիրը/Վկայագիրը միակողմանի լուծվում է ինքնաշխատ և Ապահովագրողը Պայմանագրի/Վկայագրի լուծման վերաբերյալ որևէ գրավոր այլ փաստաթուղթ չի կազմում:

8.11. Եթե Պայմանագրով/Վկայագրով նախատեսված է, որ Ապահովագրողը Պայմանագրով/Վկայագրով սահմանված ժամկետում և չափով Ապահովադրի կողմից հերթական ապահովագրավճարը չվճարելու դեպքում սահմանում է լրացուցիչ ժամկետ ապահովագրավճարի վճարման համար և ծանուցում է այդ մասին Ապահովադրին, ապա Ապահովագրողի կողմից Ապահովադրին (Շահառուին) ուղարկվող նամակները և ծանուցումները համարվում են ուղարկված պատշաճ կարգով՝ հետևյալ պայմաններից մեկը պահպանելու դեպքում՝

1) ծանուցումը գրավոր տեսքով առձեռն փոխանցվել է Ապահովադրին (Շահառուին) կամ ուղարկվել է պատվիրված նամակ փոստային եղանակով՝ Պայմանագրում/Վկայագրում նշված Ապահովադրի (Շահառուի) հասցեով կամ կոնտակտային տվյալներով այլ փաստաթղթում նշված Ապահովադրի (Շահառուի) կողմից տրամադրված հասցեով,

2) ծանուցումը ուղարկվել է էլեկտրոնային նամակի միջոցով՝ Պայմանագրում/Վկայագրում կամ կոնտակտային տվյալներով այլ փաստաթղթում նշված Ապահովադրի (Շահառուի) կողմից տրամադրված էլեկտրոնային հասցեին,

3) եթե Ապահովադիրը (Շահառուն) ֆիզիկական անձ է, ապա ծանուցումը կարող է ուղարկվել SMS հաղորդագրության միջոցով՝ Պայմանագրում/Վկայագրում կամ կոնտակտային տվյալներով այլ փաստաթղթում նշված Ապահովադրի (Շահառուի) կողմից տրամադրված հեռախոսահամարին, կամ էլեկտրոնային նամակի տեսքով՝ բջջային հավելված օգտագործելու միջոցով:

8.12. Սույն Պայմանների 8.11. կետով նախատեսված կարգով ծանուցումներն Ապահովադրի (Շահառուի) կողմից համարվում են պատշաճ ստացված և վերջիններիս կողմից որոշակի գործողություններ կատարելու համար սահմանված ժամկետները Ապահովագրողի կողմից սկսվում են հաշվարկվել՝

- ծանուցումը գրավոր տեսքով Ապահովադրին (Շահառուին) առձեռն փոխանցելու դեպքում՝ հանձնելու օրվան հաջորդող օրվանից,
- փոստով պատվիրված նամակով ուղարկվելու դեպքում՝ հետպատասխան տեղեկացման մեջ

նշված ծանուցման ստացման կամ որևէ հիմքով նամակը փոստի ծառայության կողմից հետ վերադարձվելու հաջորդող օրվանից,

- էլեկտրոնային փոստով կամ SMS հաղորդագրության կամ բջջային հավելվածով ծանուցումն ուղարկվելու դեպքում՝ ծանուցումն ուղարկելու օրվան հաջորդող օրվանից:

Ապահովադրի (Շահառուի) կողմից տրամադրված հասցեի, հեռախոսահամարի և/կամ տվյալների փոփոխության դեպքում, Ապահովադիրը (Շահառուն) պարտավորվում է այդ փոփոխության պահից 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տեղեկացնել Ապահովագրողին այդ մասին: Եթե Ապահովագրողը նախապես չի տեղեկացվել Ապահովադրի (Շահառուի) Պայմանագրում/Վկայագրում կամ այլ փաստաթղթում նշված հասցեի, հեռախոսահամարի և/կամ տվյալների փոփոխության մասին, ապա նախորդ հայտնի հասցեով Ապահովադրին (Շահառուին) ուղարկված բոլոր ծանուցումները և տեղեկացումները կհամարվեն ստացված նախորդ հասցեով ստացված օրվանից:

8.13. Եթե Պայմանագրով/Վկայագրով սահմանված է ապահովագրավճարի վճարման տարաժամկետ եղանակ և մինչև Պայմանագրով/Վկայագրով սահմանված հերթական ապահովագրավճարի վճարման ժամկետը Ապահովադիրը հայտնել է ապահովագրական պատահար ի հայտ գալու մասին, ապա Ապահովագրողն իրավունք ունի Ապահովադրից պահանջել վաղաժամկետ վճարել ապահովագրավճարի չվճարված մասը կամ հատուցման ենթակա գումարից հաշվանցել վճարման ենթակա ապահովագրավճարն ամբողջությամբ:

9. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ/ ՎԿԱՅԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ԴԱԴԱՐՈՒՄԸ

9.1. Պայմանագիրը/Վկայագիրը կնքվում է գրավոր և պետք է համապատասխանի ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված վավեր գործարքի ընդհանուր պայմաններին:

9.2. Պայմանագիր/Վկայագիր կնքելիս Ապահովադիրն Ապահովագրողի պահանջով՝

1) լրացնում է Դիմումը և/կամ ապահովագրության օբյեկտի նկարագրությունը Ապահովագրողի կողմից սահմանված ձևով և տրամադրում է լրացված Դիմումը և/կամ նկարագրությունը Ապահովագրողին: Դիմումը և/կամ նկարագրությունը լրացվում է անձամբ Ապահովադրի կամ վերջինիս լիազոր ներկայացուցչի կողմից: Ապահովադրի խնդրանքով և վերջինիս խոսքերի և տրամադրած տեղեկատվության հիման վրա Դիմումը կարող է լրացվել Ապահովագրողի ներկայացուցչի կողմից: Դիմումի բոլոր կետերը/նկարագրությունները պետք է լրացվեն ընթեռնելի/հասկանալի ձեռագրով՝ բացառելով երկակի մեկնաբանությունը: Դիմումի և/կամ նկարագրության մեջ նշված տեղեկատվության իսկության պատասխանատվությունը կրում է Ապահովադիրը: Լրացված Դիմումը և/կամ նկարագրությունը ստորագրվում և հաստատվում է Ապահովադրի կամ նրա լիազոր ներկայացուցչի կողմից,

2) Ապահովագրողին է ներկայացնում ապահովագրության ներկայացված շարժական գույքի և սարքավորումների ցանկը՝ նշելով գույքի յուրաքանչյուր օբյեկտի տարբերակիչ հատկանիշները և յուրահատկությունները, գույքի արժեքը՝ հաշվապահական հաշվառման մատյանների կամ այլ փաստաթղթերի գրառումների հիման վրա, որոնք հաստատում են գույքի առկայության փաստը և Ապահովադրի իրականացրած ծախսերը այդ գույքի ձեռքբերման կամ պատրաստման համար: Գույքի ցանկը ստորագրվում և հաստատվում է Ապահովադրի կամ նրա լիազոր ներկայացուցչի կողմից,

3) Ապահովագրողին կամ նրա լիազոր ներկայացուցչին հնարավորություն է տալիս զննել ապահովագրության ընդունվող գույքը,

4) Ապահովագրողին ներկայացնում է ապահովագրության ընդունվող գույքի նկատմամբ Ապահովադրի (Շահառուի) գույքային շահը հավաստող փաստաթղթերը (դրանց պատճենները):

Այդպիսի փաստաթղթեր կարող են լինել՝ սեփականության իրավունքի վկայականը, Ապահովադրին (Շահառուին) սեփականության իրավունքի փոխանցումը հաստատող կամ Ապահովադրին (Շահառուին) տիրապետելու/օգտագործելու իրավունք օժտող պայմանագրերը կամ ժառանգության իրավունքի վկայականը, կադաստրից տեղեկանքը:

5) ապահովագրության համար ներկայացված գույքի իրական արժեքը հաստատող փաստաթղթեր,

6) ապահովագրության համար ներկայացվող գույքի առկայությունն ու փաստացի վիճակը հաստատող փաստաթղթեր (քաղվածք հաշվեկշռից՝ գույքի բոլոր տեսակների համար, տեղեկանք կադաստրից կամ դրան փոխարինող փաստաթուղթ՝ անշարժ գույքի օբյեկտի համար, գույքագրման քարտ կամ դրան փոխարինող փաստաթուղթ՝ սարքավորումների համար, ապրանքի շարժի մասին տեղեկանք, պահեստի բեռնման մասին տեղեկանք՝ ապրանքանյութական արժեքների համար),

7) անշարժ գույքի ապահովագրության ներկայացված օբյեկտներում կամ անշարժ գույքի օբյեկտներում, որտեղ գտնվելու է ապահովագրության ներկայացրած շարժական գույքը և/կամ ապրանքանյութական արժեքները՝ պետական վերահսկողական մարմինների կողմից հրդեհային և/կամ արտադրական անվտանգության ստուգման վերաբերյալ փաստաթղթերը՝ ելնելով նրանց իրավասությունից,

8) ապահովագրության ներկայացված գույքի նկատմամբ անվտանգության պահպանման միջոցառումների առկայությունը հավաստող փաստաթղթեր:

Ապահովագրողն իրավունք ունի իր հայեցողությամբ կրճատել կամ ընդլայնել ներկայացվող փաստաթղթերի ցանկը:

9.3. Պայմանագիրը/Վկայագիրը կնքելուց հետո Դիմումը և/կամ նկարագրությունը և ապահովագրված գույքի ցանկը համարվում են Պայմանագրի/Վկայագրի անբաժանելի մասը:

9.4. Պայմանագրի/Վկայագրի կնքման ժամանակ կամ դրա գործողության ընթացքում սույն Պայմանների դրույթները կարող են փոփոխվել (բացառվել կամ լրացվել) Կողմերի գրավոր համաձայնությամբ, եթե այդպիսի փոփոխությունները չեն հակասում ՀՀ գործող օրենսդրությանը: Պայմանագրի/Վկայագրի դրույթների և սույն Պայմանների միջև հակասությունների առկայության դեպքում գերակա ուժ ունեն Պայմանագրի/Վկայագրի դրույթները:

9.5. Պայմանագի/Վկայագրի բոլոր փոփոխությունները և լրացումները կատարվում են գրավոր՝ Կողմերի միջև լրացուցիչ համաձայնագրի ստորագրմամբ:

9.6. Ապահովագրողն իրավունք ունի սույն Պայմանների հիման վրա նույնատիպ պայմաններով կնքված Պայմանագրերին/Վկայագրերին տալ որոշակի մարքեթինգային անվանումներ:

9.7. Պայմանագրի/Վկայագրի գործողության ընթացքում դրա կորստի դեպքում Ապահովադրի գրավոր դիմումի հիման վրա Ապահովագրողը վերջինիս տրամադրում է դրա կրկնօրինակը:

9.8. Պայմանագիրը/Վկայագիրը կնքվում է մեկ տարի ժամկետով, եթե դրանում այլ բան նախատեսված չէ:

9.9. Պայմանագիրը/Վկայագիրը, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ, ուժի մեջ է մտնում՝

1) ապահովագրավճարի կամ դրա առաջին մասի կանխիկ վճարման դեպքում ապահովագրավճարի վճարման հաջորդող օրվա ժամը 00:00-ին, բայց ոչ շուտ, քան Պայմանագրում/Վկայագրում նշված գործողության ժամկետի սկզբի օրվա 00:00-ից: Ընդ որում, վճարման օր է համարվում ապահովագրավճարի ստացականի վրա նշված ամսաթիվը,

2) ապահովագրավճարի կամ դրա առաջին մասի անկանխիկ վճարման դեպքում՝ Ապահովագրողի բանկի հաշվարկային հաշվին փոխանցելու նպատակով Ապահովադրի

հաշվարկային հաշվից դուրս գրման օրվա հաջորդող օրվա ժամը 00:00-ին, բայց ոչ շուտ, քան Պայմանագրում/Վկայագրում նշված գործողության ժամկետի սկզբի օրվա 00:00-ից:

9.10. Պայմանագիրը/Վկայագիրը ավարտվում է Պայմանագրում/Վկայագրում նշված գործողության ժամկետի ավարտի օրվա տեղական ժամանակով ժամը 23:59 րոպեին:

9.11. Ապահովագրությունը տարածվում է այն ապահովագրական պատահարների վրա, որոնք տեղի են ունեցել Պայմանագրի/Վկայագրի ուժի մեջ մտնելուց հետո, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ:

9.12. Սույն Պայմանների հիման վրա Պայմանագիր/Վկայագիր կնքելիս, Ապահովադիրը տալիս է իր համաձայնությունն առ այն, որ Ապահովագրողը Պայմանագրի/Վկայագրի գործողության ողջ ընթացքում և դրա ավարտից հետո 10 (տասը) տարվա ընթացքում իրավունք ունի մշակել Պայմանագրում/Վկայագրում նշված ֆիզիկական անձանց անձնական տվյալները՝ Պայմանագրի/Վկայագրի կատարման, վիճակագրական և վերլուծական, ինչպես նաև ՀՀ նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջների կատարման նպատակներով:

Սույն Պայմանների հիման վրա Պայմանագիր/Վկայագիր կնքելիս, Ապահովադիրը տալիս է նաև իր համաձայնությունը Ապահովագրողի այլ ապահովագրատեսակների (պրոդուկտների) և ծառայությունների, ինչպես նաև Ապահովագրողի հետ ապահովագրության Պայմանագրի/Վկայագրի վերակնքման պայմանների տեղեկացման համար:

Վերը նշված նպատակներն իրականացնելու համար Ապահովագրողը իրավունք ունի Պայմանագրի/Վկայագրի կնքման հետ կապված իրեն հայտնի դարձած անձնական տվյալները փոխանցել երրորդ անձանց, ում հետ Ապահովագրողն ունի կնքված համապատասխան համաձայնություն, որն ապահովում է անձնական տվյալների հուսալի պաշտպանությունը և անօրինական բացահայտման կանխումը:

Ապահովագրողը պարտավորվում է սույն կետով նշված նպատակներից բացի այլ նպատակներով ապահովել Ապահովադրի անձնական տվյալների պահպանությունը և գաղտնիությունը:

Անձնական տվյալների մշակման համաձայնությունը կարող է հետ կանչվել անձնական տվյալների սուբյեկտի կողմից ամբողջությամբ կամ այլ ապահովագրատեսակների (պրոդուկտների) կամ ծառայությունների մասով տեղեկացման մասով մասնակի, ուղարկելով Ապահովագրողին գրավոր դիմում այնպիսի միջոցով, որից հնարավոր կլինի հստակ որոշել նշված դիմումի Ապահովագրողի կողմից ստանալու ամսաթիվը:

Անձնական տվյալների սուբյեկտի կողմից համաձայնության ամբողջությամբ հետ կանչման դեպքում Պայմանագիրը/Վկայագիրը այդ անձի նկատմամբ դադարում է, իսկ եթե տվյալ սուբյեկտը հանդիսանում է Ապահովադիրը, ապա Պայմանագիրը/Վկայագիրը դադարում է ամբողջությամբ: Այդ դեպքում Պայմանագիրը/Վկայագիրը դադարում է վաղաժամկետ՝ տվյալների մշակման համաձայնության հետ կանչման համապատասխան դիմումը Ապահովագրողի կողմից ստանալու ամսաթվից: Նման պայմաններում Ապահովագրողը պարտավորվում է ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված ժամկետներում ոչնչացնել այդպիսի անձնական տվյալները:

9.13. Պայմանագրի/Վկայագրի գործողությունը դադարում է հետևյալ դեպքերում.

9.13.1. Պայմանագրում/Վկայագրում սահմանված գործողության ժամկետը լրանալու,

9.13.2. Ապահովագրողի կողմից Պայմանագրով/Վկայագրով ստանձնած իր պարտականություններն ամբողջ ծավալով կատարելու (ապահովագրական հատուցման վճարումը ապահովագրական գումարի չափով): Գույքի խմբային ապահովագրության դեպքում Պայմանագիրը/Վկայագիրը դադարում է այն գույքի նկատմամբ, որի գծով սպառվել է ապահովագրական գումարը,

9.13.3. Ապահովադրի կողմից Պայմանագրով/Վկայագրով սահմանված ժամկետում և չափով հերթական ապահովագրավճարը չվճարելու, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ,

9.13.4. դատարանի կողմից ապահովագրության Պայմանագրի/Վկայագրի անվավեր ճանաչելու որոշում ընդունելու,

9.13.5. ՀՀ գործող օրենսդրության համաձայն Ապահովագրողի լուծարման,

9.13.6. անհատ ձեռնարկատեր կամ ֆիզիկական անձ Ապահովադրի մահվան, իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր Ապահովադրի լուծարման,

9.13.7. Ապահովադրի (Շահառուի) կողմից գույքի օտարման,

9.13.8. Կողմերիհամաձայնությամբ,

9.13.9. ՀՀ գործող օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:

9.14. Ֆիզիկական անձ Ապահովադիրն իրավունք ունի առանց որևէ պատճառաբանության միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը/Վկայագիրը դրա կնքմանը հաջորդող 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում (մտածելու ժամանակ): Այդ դեպքում Պայմանագիրը/Վկայագիրը համարվում է լուծված ֆիզիկական անձ Ապահովադրի կողմից Պայմանագիրը/Վկայագիրը լուծելու մասին Ապահովագրողին ծանուցելու օրվան հաջորդող օրվա ժամը 00:00-ից: Ապահովադիրը դիմումի հետ պետք է ներկայացնի Պայմանագրի/Վկայագրի բնօրինակը և ապահովագրավճարի վճարման անդորրագրի բնօրինակը: Նշված փաստաթղթերի բացակայության դեպքում Ապահովադիրն անձամբ դիմումում նշում է դրանց չներկայացման պատճառները: Նշված փաստաթղթերը չներկայացնելը հիմք չի հանդիսանում Պայամանագրի/Վկայագրի վաղաժամկետ լուծման մերժման համար:

9.14.1. Մտածելու ժամանակը չի կիրառվում հետևյալ դեպքերում.

1) Պայմանագրի/Վկայագի գործողության ժամկետը չի գերազանցում 1 (մեկ) ամիսը,

2) կնքմանը հաջորդող 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում ֆիզիկական անձ Ապահովադիրը դիմել է ապահովագրական հատուցում ստանալու պահանջով:

9.14.2. Ֆիզիկական անձ Ապահովադրի կողմից Պայմանագրի/Վկայագրի կնքման օրվանից 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքումՊայմանագրից/Վկայագրից հրաժարվելու դիմում ներկայացնելու դեպքում ՝

- ապահովագրավճարն ամբողջությամբ վերադարձվում է Ապահովադրին, եթե Ապահովադիրը հրաժարվել է Պայմանագրից/Վկայագրից մինչև դրա գործողության ժամկետի սկզբի ամսաթիվը (գործողության ժամկետի սկզբի ամսաթվին),

- ապահովագրավճարը վերադարձման ենթակա է մասնակի՝ հաշվարկված Պայմանագրի/Վկայագրի չլրացած ժամկետին (օրերով) համամասնորեն՝ մասհանելով նաև Ապահովագրողի գործառնական ծախսերը (ապահովագրավճարի 35%-ը, եթե ապահովագրության Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ), եթե Ապահովադիրը հրաժարվել է ապահովագրության Պայմանագրից/Վկայագրից ապահովագրության գործողության ժամկետի սկզբի ամսաթվից հետո (գործողության ժամկետի սկզբի ամսաթվին):

Պայմանագրի/Վկայագրի գործողությունը համարվում է դադարած Ապահովագրողի կողմից Ապահովադրի Պայմանագրից/Վկայագրից հրաժարվելու գրավոր դիմումը ստանալու ամսաթվի կամ Կողմերի համաձայնությամբ այլ ամսաթվի ժամը 00:00-ից, բայց ոչ ուշ, քան սույն կետի առաջին պարբերությամբ նշված ժամկետից:

Ապահովագրավճարի (ապահովագրավճարի մի մասի) վերադարձը իրականացվում է Ապահովադրի Պայմանագրից/Վկայագրից հրաժարվելու դիմումը ներակայացնելու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում:

9.14.3. Ֆիզիկական անձ Ապահովադիրն իրավունք չունի պահանջելու ապահովագրական հատուցում մտածելու ժամանակի ընթացքում տեղի ունեցած ապահովագրական պատահարի համար հետևյալ պայմանների միաժամանակ առկայության դեպքում.

1) մտածելու ժամանակի ընթացքում ապահովագրական պատահարի մասին Ապահովադիրը չի ծանուցել Ապահովագրողին,

2) եթե այդ ապահովագրական պատահարը տեղի ունենալուց հետո ֆիզիկական անձ Ապահովադիրը մինչև մտածելու ժամանակի ավարտը ծանուցել է Ապահովագրողին Պայմանագիրը/Վկայագիրը լուծելու մասին:

9.15. Եթե Պայմանագիրը/Վկայագիրը վաղաժամկետ դադարում է ապահովագրական պատահարից տարբերվող այլ հանգամանքների բերումով ապահովագրական պատահար ի հայտ գալու հնարավորության վերանալու կապակցությամբ, Ապահովագրողն իրավունք ունի ապահովագրավճարի մի մասի նկատմամբ՝ համամասնորեն այն ժամանակին, որի ընթացքում գործել է ապահովագրությունը:

Եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ, ապահովագրավճարի ետ վերադարձման ենթակա մասը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$ՎԱ = \frac{(Ա - 35\% * Ա) * n}{N} - Հ$$

ՎԱ՝Վերադարձման ենթակա ապահովագրավճարի մաս:

Ա՝ Պայմանագրով/Վկայագրով վճարված ապահովագրավճար,

35% * Ա՝ Ապահովագրողի ծախսեր,

n՝ Պայմանագրի/Վկայագրի վաղաժամկետ լուծման ամսաթվից մինչև Պայմանագրի/Վկայագրի գործողության ժամկետի ավարտի օրերի քանակ,

Հ՝ հատուցված և հատուցման ենթակա ապահովագրական հատուցումներ,

N՝ Պայմանագրի/Վկայագրի գործողության ժամկետը՝ օրերով (ժամանակահատված, որի համար կնքվել է Պայմանագիրը/Վկայագիրը):

9.16. Սույն Պայմանների 9.14. և 9.15. կետերում թվարկված հիմքերից տարբերվող հիմքերով Պայմանագրի/Վկայագրի վաղաժամկետ դադարեցման դեպքում ապահովագրավճարը (այդ թվում նաև ապահովագրավճարի մասը) ենթակա չէ վերադարձման, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ:

9.17. Ապահովադիրն իրավունք ունի ցանկացած ժամանակ հրաժարվել Պայմանագրից/Վկայագրից, եթե հրաժարման պահին ապահովագրական պատահարի տեղի ունենալու հավանականությունը չի վերացել սույն Պայմանների 9.15. կետում նշված հանգամանքներով: Պայմանագրից/Վկայագրից Ապահովադրի վաղաժամկետ հրաժարվելու դեպքում Ապահովագրողին վճարված ապահովագրավճարը վերադարձման ենթակա չէ, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ:

10. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ/ ՎԿԱՅԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԻ ՄԵԾԱՑՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

10.1. Պայմանագրի/Վկայագրի գործողության ընթացքում Ապահովադիրը (Շահառուն) պարտավոր է անհապաղ, բայց ոչ ուշ, քան ի հայտ գալուց 24 ժամվա ընթացքում, Ապահովագրողին գրավոր տեղեկացնել Պայմանագրի/Վկայագրի կնքման պահին Ապահովագրողին հայտնած հանգամանքների փոփոխությունների մասին, որոնք մեծացնում են ապահովագրական ռիսկը:

10.2. Ապահովագրական ռիսկը մեծացնող հանգամանքների փոփոխություններ են համարվում Պայմանագրում/Վկայագրումկամ գրավոր Դիմումում և/կամ նկարագրությունում համաձայնեցված հանգամանքները, այդ թվում նաև, բայց չսահմանափակվելով՝

- ապահովագրված գույքի օտարումը հօգուտ այլ անձի,
- ապահովագրված գույքի տիրապետման, օգտագործման և տնօրինման իրավունքի փոխանցումը այլ անձի
- ապահովագրված գույքի հանձնումը վարձակալության, լիզինգի, գրավի, վարձույթի,
- ապահովագրված գույքի գտնվելու շենքերում, կառույցներում կամ փակ տարածքներում շինմոնտաժային, վերանորոգման և/կամ վերկանգնողական աշխատանքների անցկացումը.
- ապահովագրված գույքի գտնվելու վայրի փոփոխումը:

10.3. Ապահովագրական ռիսկը մեծացնող հանգամանքների մասին տեղեկացված Ապահովագրողն իրավունք ունի Ապահովադրից պահանջելու Պայմանագրի/Վկայագրի պայմանների փոփոխում կամ ռիսկի մեծանալուն համարժեք լրացուցիչ ապահովագրավճարի վճարում:

10.4. Պայմանագրի/Վկայագրիպայմանների փոփոխումից կամ ապահովագրավճարի լրավճարումից Ապահովադրի հրաժարվելը հանդիսանում է Ապահովադրի Պայմանագրի/Վկայագրիվաղաժամկետ դադարեցման համաձայնություն: Պայմանագիրը/Վկայագիրը համարվում է Կողմերի համաձայնությամբ վաղաժամկետ դադարեցված այն պահից, երբ Ապահովադիրը հրաժարվում է Պայմանագրի/Վկայագրի պայմանների փոփոխումից կամ լրացուցիչ ապահովագրավճարի վճարումից:

10.5. Եթե Ապահովադիրը (Շահառուն) չի հայտնում Ապահովագրողին Պայմանագրի/Վկայագրի կնքման պահին հայտնած էական հանգամանքների փոփոխության մասին, և եթե այդ հանգամանքները հետագայում բերում են վնասի առաջացման, ապա Պայմանագիրը/Վկայագիրը համարվում է Կողմերի համաձայնությամբ վաղաժամկետ դադարած՝ ապահովագրական ռիսկը մեծացնող հանգամանքներն ի հայտ գալու պահից:

10.6. Ապահովագրողն իրավունք չունի պահանջելու լուծել Պայմանագիրը/Վկայագիրը, եթե ապահովագրական ռիսկը մեծացնող հանգամանքների մասին տեղեկանալու պահին դրանք արդեն վերացել են:

11.ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

11.1. Ապահովադիրն իրավունք ունի՝

11.1.1. ծանոթանալ սույն Պայմաններին,

11.1.2. իր լիազոր ներկայացուցչի միջոցով կնքել Պայմանագիր/Վկայագիր,

11.1.3. Պայմանագրի/Վկայագրի պայմաններում փոփոխություններ կատարելու առաջարկ ներկայացնել Ապահովագրողին,

11.1.4. սույն Պայմաններին և ՀՀ օրենսդրությանը համապատասխան վաղաժամկետ հրաժարվել Պայմանագրից/Վկայագրից,

11.1.5. ՀՀ գործող օրենսդրությամբ նախատեսված կարգով ստանալ տեղեկություններ Ապահովագրողի մասին,

11.1.6. Պայմանագրում/Վկայագրում նշված Շահառուին փոխարինել մեկ այլ անձով՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ապահովագրողին: Շահառուն չի կարող փոխարինվել այլ անձով, եթե նա արդեն կատարել է Պայմանագրով/Վկայագրով նախատեսված որևէ պարտավորություն կամ Ապահովագրողին ներկայացրել է ապահովագրական հատուցում ստանալու դիմում,

11.1.7. Պայմանագրի/Վկայագրի պայմաններին համապատասխան ստանալ ապահովագրական հատուցում:

11.2. Ապահովադիրը պարտավոր է՝

11.2.1. Պայմանագրի/Վկայագրի կնքման ժամանակ Ապահովագրողին հայտնել իրեն հայտնի այն հանգամանքների մասին, որոնք ունեն էական նշանակություն ապահովագրական պատահարի տեղի ունենալու հավանականության և դրա հետևանքով առաջացած հնարավոր վնասների չափը որոշելու համար (ապահովագրական ռիսկ), եթե այդ հանգամանքները հայտնի չեն և չեն կարող հայտնի լինել Ապահովագրողին: Բոլոր դեպքերում, էական են համարվում Պայմանագրում/Վկայագրում և/կամ Դիմումում և/կամ նկարագրությունում որոշակիորեն համաձայնեցված հանգամանքները: Եթե Պայմանագիրը/Վկայագիրը կնքվել է Ապահովագրողի որևէ հարցի Ապահովադրի պատասխանների բացակայությամբ, ապա Ապահովագրողը չի կարող հետագայում պահանջել Պայմանագր/Վկայագրի լուծում կամ անվավեր ճանաչում այն հիմքով, որ Ապահովադրի կողմից չեն հայտնվել համապատասխան հանգամանքները,

11.2.2. Ապահովագրավճարը (հերթական ապահովագրավճարները) վճարել ժամանակին՝ Պայմանագրով/Վկայագրով սահմանված չափով և կարգով,

11.2.3. հետևել ապահովագրված գույքի, ինչպես նաև այն շենքերի և կառույցների, որոնցում գտնվում է ապահովագրված գույքը, հակահրդեհային անվտանգության, արտադրական անվտանգության օրենսդրական պահանջներին, շահագործման, պահպանման և անվտանգության կանոններին, ժամանակին կատարել անհրաժեշտ վերանորոգման և կանխարգելիչ աշխատանքները,

11.2.4. ձեռնարկել ողջամիտ և հասանելի կանխարգելիչ միջոցներ՝ ապահովագրված գույքին հնարավոր վնաս ի հայտ գալու կանխարգելման, ինչպես նաև նվազեցման համար,

11.2.5. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված պահանջներին և ՀՀ օրենսդրության համապատասխան վարել ապահովագրված ապրանքանյութական արժեքների հաշվառում և ապահովել հաշվառման փաստաթղթերի պահպանումը:

11.3. Ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող իրադարձություն տեղի ունենալու դեպքում Ապահովադիրը պարտավոր է՝

11.3.1. անհապաղ, բայց ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող իրադարձության մասին Ապահովադրին հայտնի դառնալու պահից ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում գրավոր դիմել համապատասխան իրավասու մարմիններին (ՀՀ Ոստիկանություն, Պետական հակահրդեհային ծառայություն, գազի վթարային ծառայություն, փրկարար ծառայություն, ԱԻՆ ստորաբաժանում և այլն) և ապահովել տեղի ունեցած դեպքի փաստաթղթային ձևակերպումը և հաստատումը, որի հետևանքով ապահովագրված գույքին հասցվել է վնաս,

11.3.2. ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ վնասի կանխարգելման և նվազեցման համար, այդ թվում՝ Ապահովագրողի կողմից գրավոր խորհրդատվությամբ տրված միջոցները, և գործել այնպես, ինչպես կգործեր, եթե գույքը ապահովագրված չլիներ,

11.3.3. անհապաղ, բայց ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող դեպքի մասին իրեն հայտնի դառնալու պահից ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում այդ մասին հայտնել Ապահովագրողին՝ զանգահարելով Պայմանագրում/Վկայագրում նշված Ապահովագրողի շուրջօրյա հեռախոսահամարով, և հայտնել հետևյալ տեղեկությունները՝

1) Պայմանագրի/Վկայագրի համարը և կնքման ամսաթիվը,
2) վնասված օբյեկտի անվանումը և տեղակայման հասցեն,
3) վնասը ի հայտ գալու ամսաթիվը և ժամը,
4) վնասի բնույթի, պատճառի և հանգամանքների մասին տեղեկություններ,
5) Ապահովադրի գործողությունները վնասը ի հայտ գալու պահին,
6) վնասի ենթադրելի չափը:

11.3.4. մինչև Ապահովագրողի ներկայացուցչի ժամանելը, ապահովագրված գույքը պահպանել (վնասված և չվնասված) այն տեսքով, որում այն հայտնվել է ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող իրադարձությունը տեղի ունենալուց հետո: Ապահովադիրն իրավունք ունի ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող իրադարձության վայրում փոփոխությունների կատարել այն դեպքում, եթե դա պահանջվում է իրավասու մարմինների կողմից՝ ելնելով անվտանգության կամ վնասի չափի նվազեցման միտումներից: Այն դեպքում, երբ անհնար է ապահովագրված գույքը պահպանել այն վիճակում, որում այն հայտնվել է ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող իրադարձությունից հետո, Ապահովադիրը պարտավոր է ամրագրել իրադարձության հետ կապված բոլոր վնասները՝ լուսանկարման, տեսաձայնագրման կամ այլ միջոցով, որը թույլ կտա ամրագրել վնասը մինչև ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող իրադարձության պատկերի փոփոխվելը և տրամադրել դրանք Ապահովագրողին,

11.3.5. Ապահովագրողին կամ նրա լիազոր ներկայացուցչին ընձեռնել վնասված գույքը ուսումնասիրելու և զննելու հնարավորություն՝ վնասների պատճառների, չափի և այլ հանգամանքների բացահայտման նպատակով, ինչպես նաև Ապահովագրողի պահանջով ապահովել Ապահովադրի ներկայացուցչի ներկայությունը վնասված գույքի զննության ժամանակ,

11.3.6. ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող իրադարձության մասին 11.3.3. կետով սահմանված կարգով Ապահովագրողին տեղեկացնելուց հետո 30 (երեսուն) աշխատանքային օրվա ընթացքում Ապահովագրողին ներկայացնել ապահովագրական հատուցում ստանալու գրավոր դիմում՝ նշելով այնտեղ սույն Պայմանների 11.3.3. կետում թվարկված տեղեկատվությունը:

11.3.7. ապահովագրական հատուցում ստանալու համար դիմելիս՝ Ապահովագրողին տրամադրել հետևյալ փաստաթղթերը՝

11.3.7.1. Պայմանագիրը/Վկայագիրը,

11.3.7.2. Ապահովագրողի մոտ Ապահովադրի (Շահառուի) շահերը ներկայացնելու իրավունք ընձեռող լիազորագիր,

11.3.7.3. Դիմումատուի անձը հաստատող փաստաթուղթը,

11.3.7.4. ապահովագրական հատուցում վճարելու համար գրավոր դիմում՝ Ապահովագրողի կողմից սահմանված ձևով,

11.3.7.5. բանկային տվյալներ, եթե ապահովագրական հատուցման վճարումը իրականացվում է հաշվեհամարին՝ անկանխիկ փոխանցման միջոցով,

11.3.7.6. փաստաթղթեր, որոնք հաստատում են ապահովագրված գույքի ձեռքբերման, առկայության փաստը, փաստացի ծավալը և արժեքը ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող դեպքի օրվա դրությամբ: Այդպիսի փաստաթղթեր կարող են հանդիսանալ նաև առուվաճառքի պայմանագիրը, ապրանքագրերը, գույքի հանձնման-ընդունման ակտերը, պայմանագրերով վճարումը հաստատող վճարային փաստաթղթերը, հաշվապահական հաշվառման փաստաթղթերը,

11.3.7.7. ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող դեպքի օրվա դրությամբ ապահովագրված գույքի նկատմամբ Ապահովադրի (Շահառուի) գույքային շահը հաստատող փաստաթղթեր (սեփականության իրավունքի վկայական, առուվաճառքի, առաքման, վարձակալության, գրավի, կոմիսիայի պայմանագիր և այլ փաստաթղթեր, որոնք հաստատում են ապահովագրված գույքի պահպանման շահը),

11.3.7.8. վնասված և ոչնչացված գույքի ցանկը՝ ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող դեպքի օրվա դրությամբ արժեքի նշումով, ինչպես նաև պահպանված և փրկված գույքի ցանկը՝ ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող դեպքի օրվա դրությամբ դրանց արժեքի նշումով,

11.3.7.9. ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող իրադարձության տեղի ունենալու փաստը հաստատող փաստաթղթեր՝

1) օրենսդրությամբ համապատասխան պատահարը քննելու իրավասություն ունեցող իրավասու մարմինների (պաշտոնատար անձանց) կողմից տրված փաստաթղթերի բնօրինակները կամ դրանց վավերացված պատճենները (տեղեկանքներ, արձանագրություններ, որոշումներ, վճիռներ, դատավճիռներ և այլն) որոնցում ամբողջությամբ նշված է.

- տվյալ պատահարի առաջացման վայրը, տեղի ունենալու ամսաթիվը, ժամը, պատճառները, հանգամանքները և հետևանքները, նշված մարմիններին (պաշտոնատար անձանց) տվյալ պատահարի վերաբերյալ տեղեկացնելու և վերջիններիս պատահարի վայր ժամանելու ամսաթիվը և ժամը, վնասված (ոչնչացված) ապահովագրված գույքի անվանումը, վնասների բնույթը և ցանկը,
- ապահովագրված գույքի սեփականատիրոջ լրիվ անվանումը,
- տեղի ունեցած իրավախախտման էությունը և վարչական տույժի ենթարկելու որոշումը (վարչական իրավախախտման դեպքում), կամ այն իրավունքի նորմերը, որոնց համապատասխան հարուցվել է քրեական գործ, այլ տեղեկություններ, որոնք օրենսդրությամբ սահմանված կարգով պետք է նշված լինեն նման բնույթի փաստաթղթերի մեջ,
- այն իրավանորմերը, որոնց հիման վրա հարուցվել է քրեական գործ գողության, կողոպուտի կամ ավազակության հատկանիշներով,

2) օթերևութաբանական (սեյսմիկ) ծառայության պետական հաստատության կողմից համապատասխան տարերային (բնական) աղետի բնույթը և տևողությունը հաստատող փաստաթղթեր,

3) իրավասու մարմինների և (կամ) ծառայությունների կողմից տրամադրված, պատահարների (ջրատար խողովակների և այլ ինժեներական համակարգերի վթարի, գոլորշային կաթսաների, գազատարների, մեքենաների և մեխանիզմների պայթյունի և այլն) ժամի, վայրի, բնույթի և պատճառների մասին տեղեկատվությունը հաստատող փաստաթղթեր,

4) ապահովագրված գույքին հասցված վնասի փաստի վերաբերյալ կազմված (հրապարակված) ակտեր, հրամաններ, կարգադրություններ և այլ փաստաթղթեր:

11.3.7.10. վնասի չափը որոշելու համար անհրաժեշտ փաստաթղթեր:

Այդպիսի փաստաթղթերի շարքին են դասվում՝

- վնասված կամ ոչնչացված գույքի ցանկը,
- ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող իրադարձության տեղի ունենալու օրվա դրությամբ վնասված կամ ոչնչացված գույքի արժեքը հաստատող փաստաթղթերը,
- փաստաթղթերը, որոնք հաստատում են գույքի հաշվարկված մաշվածության չափը ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող իրադարձության տեղի ունենալու ամսաթվին ամենամոտ ամսաթվով,
- վնասված գույքի դեֆեկտային (գործարկման) հայտարարագիրը,
- գույքագրման ակտերը (ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող իրադարձության տեղի ունենալու օրվան ամենամոտ ամսաթվով կազմված և գույքի վնասման կամ ոչնչացման փաստով կազմված),
- հիմնական միջոցների դուրսգրման ակտերը,
- վնասված գույքը խոտանման հանձնելու և (կամ) գույքի մնացորդների ոչնչացման փաստը հաստատող փաստաթղթերը (եթե այդպիսի ոչնչացումը համաձայնեցված է եղել Ապահովագրողի հետ),
- պատրաստի արտադրանքի ապրանքային պաշարների, նյութերի, հումքի, կիսաֆաբրիկատների, իրացման ենթակա ապրանքների շարժի հաշվառման փաստաթղթերը

(համալրում, բեռնաթափում, դուրսգրում),

- վնասված գույքի վերանորոգման նպատակահարմարության և հետագա օգտագործման մասին եզրակացությունը (տեխնիկական փորձաքննություն),
- վնասի չափը որոշելու համար Ապահովադրի (Շահառուի) կողմից ներգրավված փորձագիտական կազմակերպությունների հետ պայմանագրերը,
- վերանորոգման (վերականգնման) աշխատանքների անցկացման պայմանագրերը, հաշվարկները, նախագծերը,
- վնասված գույքի վերանորոգման (վերականգնողական) աշխատանքների համար կատարված ծախսերը հաստատող փաստաթղթերը,
- փաստաթղթերը, որոնք հաստատում են ապահովագրական պատահարի արդյունքում ոչնչացված գույքի և հանգույցների, մասերի, ագրեգատների, նյութերի ձեռքբերման ծախսերը,

11.3.7.11. անհրաժեշտության դեպքում, Ապահովագրողի գրավոր պահանջով լրացուցիչ փաստաթղթեր, որոնք վերաբերում են տեղի ունեցած իրադարձության հանգամանքներին, և անհրաժեշտ են Ապահովագրողի կողմից տեղի ունեցած իրադարձությունը ապահովագրական պատահար ճանաչելու վերաբերյալ որոշում կայացնելու համար:

Եթե համապատասխան իրավասու մարմինները հրաժարվել են տրամադրել Ապահովադրին որևէ փաստաթուղթ, ապա Ապահովադիրը (Շահառուն) Ապահովագրողին է տրամադրում իր կողմից վերոհիշյալ մարմիններին ուղարկված համապատասխան հարցման և դրա գրավոր պատասխանի պատճենը,

11.3.8. անհրաժեշտության դեպքում, Ապահովագրողին կամ նրա ներկայացուցչին տրամադրել լիազորագիր Ապահովադրի (Շահառուի) շահերը պաշտպանելու և վնասի հատուցման գործընթացի կարգավորման գործը վարելու համար,

11.3.9. Ապահովագրողին փոխանցել բոլոր փաստաթղթերը և ապացույցները, հայտնել բոլոր տեղեկությունները, որոնք անհրաժեշտ են Ապահովագրողին մեղավոր անձանց նկատմամբ հետադարձ պահանջի իրեն անցած իրավունքի (սուբրոգացիա) իրականացման համար, եթե Պայմանագրով/Վկայագրովայլ բան նախատեսված չէ,

11.3.10. իրեն հայտնի դառնալուց անմիջապես հետո, Ապահովագրողին տեղեկացնել կորած ապահովագրված գույքի գտնվելու վայրի մասին, եթե վերջինս գտնվել է կամ վերադարձվել է Ապահովադրին: Ապահովագրողին վերադարձնել ապահովագրված գույքի համար վճարված ապահովագրական հատուցումը՝ նվազեցնելով վնասվածքների վերացման համար կատարված ծախսերը, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ,

11.3.11. Ապահովագրողին անմիջապես հայտնել կորուստի մատնված (ոչնչացված) կամ վնասված ապահովագրված գույքի դիմաց երրորդ անձանց կողմից փոխհատուցում ստանալու մասին,

11.3.12. չգործել ի վնաս Ապահովագրողի շահերի, չհրաժարվել պատահարի վերաբերյալ քննություն իրականացնելու պահանջից, ՀՀ օրենսդրության համաձայն քննությունը դադարեցնելու հետևանք առաջացնող հայտարարություններ չանել՝ առանց Ապահովագրողի հետ նախապես համաձայնեցնելու:

11.4. Պայամանգրից/Վկայագրից կամ սույն Պայմաններից բխող պարտականությունների Ապահովադրի կողմից չկատարելու դեպքում, այդ պարտականությունները հավասարապես տարածվում են Շահառուի վրա: Շահառուի կողմից այդ պարտականությունների չկատարումը ունենում է նույն հետևանքները, ինչը որ կրում է Ապահովադիրը այդպիսի պարտականությունների չկատարելու հետևանքով:

11.5. Ապահովագրողն իրավունք ունի՝

11.5.1. ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով պահանջել անվավեր ճանաչել Պայմանագիրը/Վկայագիրը, եթե Պայմանագիրը/Վկայագիրը կնքելուց հետո հաստատվի, որ Ապահովադիրը Ապահովագրողին կամ ապահովագրական պատահարի վերաբերյալ քննություն իրականացնող մարմնին հայտնել է ակնհայտ կեղծ, կամ իրականությանը չհամապատասխանող, կամ հակասական տեղեկություններ իրեն հայտնի հանգամանքների վերաբերյալ, որոնք ունեին նշանակություն ապահովագրական պատահար ի հայտ գալու հավանականության որոշման և դրա ի հայտ գալու հետևանքով հնարավոր վնասի չափի համար: Ապահովագրողն իրավունք չունի պահանջելու անվավեր ճանաչել Պայմանագիրը/Վկայագիրը, եթե այն հանգամանքները, որոնց մասին Ապահովադիրը չի հայտնել արդեն վերացել են,

11.5.2. ձեռնարկել այնպիսի միջոցներ, որոնք նրա կարծիքով անհրաժեշտ են վնասի նվազեցման համար,

11.5.3. ինքնուրույն պարզել պատահարի առաջացման պատճառներն ու հանգամանքները, որոշել պատճառված վնասի չափը, ինչպես նաև հարցումներ ուղարկել իրավասու մարմիններին՝ ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող դեպքի փաստը, պատճառը, ինչպես նաև պատճառված վնասի չափը հաստատող փաստաթղթերի և տեղեկատվության ստացման նպատակով,

11.5.4. հետաձգել ապահովագրական հատուցման վճարման մասին որոշման ընդունումը՝ մինչև ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող դեպքի բոլոր հանգամանքների պարզաբանումը, այդ թվում մինչև իրավասու մարմինների կողմից վերջիններիս ուղղված գրավոր հարցումների պատասխանները ստանալը, ապահովագրված գույքի վնասման, կորստի կամ ոչնչացման փաստով քրեական գործի հարուցման դեպքում՝ մինչև դատարանի կողմից դատավճռի կայացումը կամ քրեական գործով վարույթի կարճելը,

11.5.5. ՀՀ գործող օրենսդրությամբ նախատեսված դեպքերում, ինչպես նաև Պայմանագրով/Վկայագրով և (կամ) սույն Պայմաններով սահմանված Ապահովադրի (Շահառուի) պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում՝ մերժել ապահովագրական հատուցման վճարումը,

11.5.6. Շահառուից պահանջել Պայմանագրով/Վկայագրով Ապահովադրի վրա դրված, սակայն վերջինիս կողմից չկատարված պարտականությունների կատարումը,

11.5.7. Պայմանագրի/Վկայագրի գործողության ընթացքում իրականացնել ապահովագրված գույքի զննություն:

11.6. Ապահովագրողը պարտավոր է՝

11.6.1. Պայամանագրի/Վկայագրի կնքման ժամանակ Ապահովադրին ծանոթացնել սույն Պայմաններին,

11.6.2. չհրապարակել Ապահովադրի (Շահառուի) մասին ունեցած տեղեկությունները, նրանց գույքային դրության վերաբերյալ տեղեկությունները, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի,

11.6.3. կատարել Պայմանագրով/Վկայագրով ստանձնած պարտականությունները,

11.6.4. Պայմանագրի/Վկայագրի և սույն Պայմանների համաձայն Ապահովադրի կողմից բոլոր պահանջվող փաստաթղթերը ներկայացնելուց և ապահովագրական պատահարի փաստը, պատճառները և չափը հաստատող բոլոր հարցերը կարգավորելուց հետո 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում որոշում կայացնել տեղի ունեցած պատահարը ապահովագրական ճանաչելու կամ չճանաչելու վերաբերյալ:

11.6.5. իրադարձությունը ապահովագրական պատահար ճանաչելուց հետո իրականացնել ապահովագրական հատուցում 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

12. ՎՆԱՍԻ ՉԱՓԻ ՈՐՈՇՄԱՆ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՅՑՄԱՆ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

12.1. Վնասի չափը որոշվում է Ապահովագրողի կողմից ապահովագրված գույքի զննման արդյունքում հաստատված տվյալների և վնասի չափը հավաստող փաստաթղթերի հիման վրա:

12.2. Ապահովագրական հատուցման չափը որոշվում և սահմանափակվում է պատճառված վնասի մեծությամբ, բայց չի կարող գերազանցել Պայմանագրով/Վկայագրով սահմանված ապահովագրական գումարը (հատուցման սահմանաչափը): Ապահովագրողի կողմից ապահովագրական հատուցումը իրականացվում է նվազեցնելով Պայմանագրով/Վկայագրով սահմանված չհատուցվող գումարը (եթե այդպիսին Պայմանագրով/Վկայագրով նախատեսված է):

12.3. Ապահովագրողի կողմից փոխհատուցման ենթակա վնասը նվազեցնելու նպատակով կատարված ծախսերը (կրակի մարման կամ կարկի, վթարների տարածման կանխման, և այլն), եթե այդ ծախսերը եղել են անհրաժեշտ կամ կատարվել են Ապահովագրողի ցուցումներով, հատուցման ենթակա են, եթե անգամ համապատասխան միջոցառումներն անցել են ապարդյուն: Այդպիսի ծախսերը հատուցվում են ապահովագրական գումարի ապահովագրական արժեքի նկատմամբ համամասնությամբ՝ անկախ այն բանից, որ այլ վնասների հատուցման գումարի հետ միասին դրանք կարող են գերազանցել ապահովագրական գումարը (հատուցման սահմանաչափը):

Եթե Պայամանգրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ, վնասի նվազեցման նպատակով Ապահովագրողի կողմից հատուցման ենթակա ծախսերը, փոխհատուցվում են ոչ ավել, քան ապահովագրական պատահարի հետևանքով ապահովագրված գույքի ապահովագրական գումարի (հատուցման սահմանաչափի) 10 (տասը) տոկոսը:

12.4. Եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ, ապահովագրական հատուցման վճարումը իրականացվում է դրամական ձևով:

12.5. Ամբողջական կորուստ/ոչնչացում է համարվում, եթե վնասված ապահովագրված գույքի վերականգնումն անհնար է կամ վերականգնման ծախսերը հավասար են կամ գերազանցում են ապահովագրական պատահարի օրվա դրությամբ ապահովագրված գույքի իրական (շուկայական) արժեքը:

12.6. Ապահովագրական հատուցումը վճարվում է՝

12.6.1. ապահովագրված գույքի ամբողջական կորստի կամ ոչնչացման դեպքում ապահովագրական հատուցումը տրվում է ապահովագրական պատահարի օրվա դրությամբ ապահովագրված գույքի իրական արժեքի չափով՝ նվազեցնելով հետագա օգտագործման համար պիտանի մնացորդների գումարը, բայց ոչ ավել քան ապահովագրական գումարը (հատուցման սահմանաչափը),

Ապահովագրված գույքի ամբողջական կորստի կամ ոչնչացման դեպքում Ապահովադիրը (Շահառուն) իրավունք ունի Ապահովագրողի համաձայնությամբ հրաժարվել ապահովագրված գույքի նկատմամբ իր իրավունքներից՝ հօգուտ Ապահովագրողի: Այդ դեպքում ապահովագրական հատուցումն իրականացվում է ապահովագրական պատահարի օրվա դրությամբ ապահովագրված գույքի իրական (շուկայական) արժեքի չափով, բայց ոչ ավել քան ապահովագրական գումարը (հատուցման սահմանաչափը): Ընդ որում, մինչև ապահովագրական հատուցումը վճարելը, Ապահովադիրը պարտավոր է Ապահովագրողի հետ կնքել ոչնչացած գույքի կամ դրա մնացորդների իրավունքի փոխանցման մասին համաձայնագիր:

12.6.2. ապահովագրված գույքի վնասման դեպքում վերականգնողական ծախսերի չափով, բայց ոչ ավել, քան Ապահովագրական գումարը (հատուցման սահմանաչափը) և Ապահովագրական պատահարի օրվա դրությամբ ապահովագրված գույքի իրական արժեքը:

12.7. Գույքի իրական արժեքը որոշվում է ՝

1)շենքերի, շինությունների, և կառույցների կոնստրուկտիվ տարրերի համար՝ տվյալ տարածքում

շենքերի և շինությունների շինարարության արժեքի չափով՝ հաշվի առնելով ապահովագրական պատահարի օրվա դրությամբ դրանց մաշվածությունը և շահագործման-տեխնիկական վիճակը,

2) հարդարման տարրերի համար՝ վերանորոգման ծախսերի չափով, ներառյալ նաև ապահովագրական պատահարի օրվա դրությամբ նյութերի արժեքը՝ հաշվի առնելով դրանց մաշվածությունը և շահագործման-տեխնիկական վիճակը, բայց ոչ ավել այն ծախսերից, որոնք անհրաժեշտ են ապահովագրված նյութերին համանման նյութեր ձեռք բերելու համար՝ հաշվի առնելով դրանց մաշվածությունը և շահագործման-տեխնիկական վիճակը, և ապահովագրական պատահարի ամսաթվի դրությամբ աշխատանքների արժեքը,

3) սարքավորումների, էլեկտրոնային սարքավորումների, կահույքի, գույքի, տեխնիկական լրակազմի ապահովագրության դեպքում՝ տվյալ գույքի ձեռքբերման և տեղադրման համար Ապահովադրի կատարած ծախսերի չափով՝ հաշվի առնելով դրանց մաշվածությունը և շահագործման-տեխնիկական վիճակը, բայց ոչ ավել, քան ապահովագրված գույքին համանման գույքի ձեռքբերման և տեղադրման համար իրականացված ծախսերը,

4) Ապահովադրի կողմից ձեռքբերված ապրանքանյութական արժեքների ապահովագրության դեպքում՝ դրանց ձեռքբերման համար Ապահովադրի կատարած ծախսերի չափով, բայց ոչ ավել, քան ապահովագրական պատահարի տեղի ունենալու պահին համանման ապրանքանյութական արժեքների նորից ձեռքբերման համար անհրաժեշտ ծախսերը,

5) Ապահովադրի կողմից արտադրվող ապրանքանյութական արժեքների, այդ թվում նաև անավարտ արտադրության ընթացքում գտնվող, ապահովագրության դեպքում՝ Ապահովադրի կողմից դրանց արտադրման համար կատարված ծախսերի չափով, բայց ոչ ավել, քան համանման ապրանքանյութական արժեքների իրացման արժեքը:

12.8. Վերականգնողական ծախսերը ներառում են.

- վերանորոգման (վերականգնման) համար անհրաժեշտ նյութերի և պահեստային մասերի ծախսերը,
- վերանորոգման աշխատանքների ծախսերը,
- մինչև վերանորոգման վայր նյութերի առաքման ծախսերը,
- այլ ծախսերը, որոնք անհրաժեշտ են ապահովագրված գույքի անմիջապես ապահովագրական պատահարից առաջ գտնվելու վիճակը վերականգնելու համար:

12.9. Վերականգնողական աշխատանքների ծախսերը չեն ներառում՝

- ապահովագրված գույքի բարելավմանն ուղղված լրացուցիչ ծախսերը,
- ապահովագրված գույքի ժամանակավոր կամ օժանդակ վերանորոգումից առաջացած ծախսերը,
- աշխատանքն արագացնելու ծախսերը,
- անհրաժեշտ ծախսերից ավել կատարված այլ ծախսերը:

12.10. Վերականգնման ծախսերը որոշելու ժամանակ հաշվի է առնվում վնասված ապահովագրված գույքի վերականգնման (վերանորոգման) ընթացքում փոխարինման ենթակա բաղադրիչների, մասերի, հանգույցների և դետալների մաշվածությունը ապահովագրական պատահարի օրվա դրությամբ, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ: Վերականգնման ծախսերը վճարվում են համապատասխան տարածաշրջանում ձևավորված միջին գների հիման վրա:

12.11. Մաշվածության նորմերը որոշվում են համաձայն նորմատիվ իրավական ակտերի դրույթների կամ փորձագիտական գնահատման հիման վրա: Եթե Պայմանագրով/Վկայագրով ապահովագրական գումարը սահմանվում է մնացորդային հաշվեկշռային արժեքի չափով, ապա

մաշվածությունը հաշվարկվում է հաշվապահական տվյալների համաձայն՝ կուտակված արժեզրկմանը հավասար, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով/Վկայագրով:

12.12. Միայն Պայմանագրով/Վկայագրով հատուկ նախատեսված լինելու դեպքում Ապահովագրողը հատուցում է նաև հետևյալ լրացուցիչ ծախսերը՝

12.12.1. ապահովագրական պատահարի հետևանքով ապահովագրության տարածքի անշարժ գույքի բեկորներից մաքրման և շինությունների քանդման ծախսերը: Նշված ծախսերը հատուցվում են ապահովագրական պատահարի ադյունքում վնասված ապահովագրված անշարժ գույքի ապահովագրական գումարի 5%-ի չափով, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ,

12.12.2. ապահովագրական պատահարից հետո վերականգնողական աշխատանքների ընթացքում ապահովագրված գույքի ժամանակավոր տեղափոխման ծախսերը՝ ապահովագրված գույքը վնասված շենքից դուրս բերելու ծախսերը, ապահովագրված գույքը ժամանակավոր պահպանման հանձնելու հետ կապված ծախսերը, ժամանակավոր զբաղեցվող փակ տարածքների կահավորման ծախսերը և դրանց օգտագործման վարձավճարը:

12.13. Պայմանագրի/Վկայագրի գործողության ամբողջ ընթացքում տեղի ունեցած բոլոր ապահովագրական պատահարներով ապահովագրական հատուցման գումարը չի կարող գերազանցել Պայմանագրով/Վկայագրով սահմանված ապահովագրական գումարը (հատուցման սահմանաչափը), բացառությամբ սույն Պայմանների 12.3 կետով նախատեսված դեպքերի:

12.14. Եթե, ապահովագրական պատահարի պահին գույքն ապահովագրված է եղել մի քանի ապահովագրական ընկերություններում (կրկնակի ապահովագրություն), ապա ապահովագրական հատուցման չափը չի կարող գերազանցել դրա իրական արժեքը: Ընդ որում, ապահովագրողներից յուրաքանչյուրն ապահովագրական հատուցումը վճարում է նշված գույքի գծով Ապահովադրի կողմից կնքված ապահովագրության բոլոր պայմանագրերի ապահովագրական գումարների նկատմամբ իր կնքած ապահովագրության պայմանագրի ապահովագրական գումարի համամասնությամբ:

12.15. Այն դեպքում, երբ ապահովագրական պատահարի արդյունքում հասցված վնասը հատուցվել է երրորդ անձանց կողմից, Ապահովագրողը հատուցում է միայն վճարման ենթակա հատուցման գումարի և երրորդ անձանց կողմից հատուցված գումարի տարբերությունը:

12.16. Այն դեպքում, եթե ապահովագրական հատուցման վճարումից հետո հայտնի է դառնում, որ Ապահովադիրը (Շահառուն) իրավունք չուներ ստանալ ապահովագրական հատուցում, Ապահովադիրը պարտավոր է վերադարձնել ապահովագրական հատուցումը Ապահովագրողին՝ Ապահովագրողի կողմից նման պահանջ ներկայացնելուց հետո հնգօրյա ժամկետում:

12.17. Կողմերի միջև վնասի պատճառների և վնասի չափի մասին վեճերի առաջացման դեպքում, Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի իր հաշվին անցկացնել փորձաքննություն: Կողմերից մեկի անցկացրած փորձաքննության եզրակացությունը պարտադիր բնույթ չի կրում մյուս Կողմի համար:

12.18. Պայմանագրի/Վկայագրի գործողության ընթացում ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող իրադարձություն տեղի ունենալու դեպքում Ապահովադիրը՝ մինչև Ապահովագրողին ապահովագրական հատուցում ստանալու համար դիմում ներկայացնելը պարտավոր է ամբողջությամբ վճարել ապահովագրավճարը (ապահովագրավճարի տարաժամկետ վճարման դեպքում), եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ:

12.19. Ապահովագրական հատուցման վճարման օր է համարվում Ապահովագրողի հաշվարկային հաշվից Ապահովադրի (Շահառուի) հաշվարկային հաշվին դրամական միջոցների փոխանցման օրը:

12.20. Եթե վերանորոգման արժեքը հաշվի, հրահանգ-պատվերի կամ հաշվարկման մեջ

նշված է արտարժույթով կամ ապահովագրական գումարը Պայմանագրում/Վկայագրում նշված է արտարժույթով, ապա ապահովագրված գույքի կորստի կամ լրիվ ոչնչացման դեպքում ապահովագրական հատուցման չափը որոշելիս կիրառվում է ապահովագրական հատուցման վճարման օրվա դրությամբ ապահովագրական գումարի արտարժույթի ՀՀ Կենտրոնական Բանկի փոխարժեքը: Եթե, ապահովագրական հատուցման վճարման օրվա դրությամբ ապահովագրական գումարի արտարժույթի ՀՀ Կենտրոնական Բանկի փոխարժեքը բարձր է Պայմանագրի/Վկայագրի կնքման օրվա դրությամբ ՀՀ Կենտրոնական Բանկի ապահովագրական գումարի փոխարժեքից 20 և ավելի տոկոսով, ապա ապահովագրական հատուցման հաշվարկի ժամանակ կիրառվում է Պայմանագրի/Վկայագրի կնքման օրվա դրությամբ ապահովագրական գումարի արտարժույթի ՀՀ Կենտրոնական Բանկի փոխարժեքը՝ ավելացված 20 տոկոսով:

Պայամանգրով/Վկայագրով կարող է սահմանվել արտարժույթի փոխարժեքի մեծության փոփոխման այլ սահմանափակում:

12.21. Ապահովագրողն իրավունք ունի մերժել ապահովագրական հատուցում վճարել Ապահովադրին, եթե.

1) Ապահովադիրը ապահովագրական պատահարն իրեն հայտնի դառնալու պահից, ապահովագրության Պայամանգրով/Վկայագրով սահմանված ժամկետում և կարգով չի տեղեկացրել Ապահովագրողին այն ի հայտ գալու մասին,

2) Ապահովադիրը դիտավորյալ չի ձեռնարկել ողջամիտ և հասանելի միջոցներ՝ հնարավոր վնասը նվազեցնելու համար,

3) Ապահովադիրը Ապահովագրողին կամ պատահարը քննող մարմնին ներկայացրել է ակնհայտ կեղծ, կամ իրականությանը չհամապատասխանող, կամ հակասական տեղեկություններ և/կամ փաստաթղթեր,

4) Ապահովադիրն Ապահովագողին չի փոխանցել բոլոր փաստաթղթերը և ապացույցները, որոնք անհրաժեշտ են Ապահովագրողի կողմից իրեն անցած պահանջի իրավունքի (սուբրոգացիա) համար,

5) վնասված գույքի վերանորոգումը և (կամ) դրա մնացորդների խոտանումը, որն իրականացվել է մինչև սույն Պայմաններով սահմանված կարգով վնասված գույքի Ապահովագրողի զննությունը, թույլ չի տալիս որոշել ապահովագրական պատահարի փաստը և վնասի չափը,

6) ապահովագրական պատահարից հետո վնասված գույքի հետվթարային վիճակը չի պահպանվել և կատարվել են ցանկացած տիպի փոփոխություններ կամ վերանորոգման աշխատանքներ՝ առանց Ապահովագրողի հետ նախապես համաձայնեցնելու և Ապահովագրողի կողմից զննում անցկացնելու,

7) Ապահովադրի (Շահառուի) կողմից չեն կատարվել Պայմանագրով/Վկայագրով և/կամ սույն Պայմաններով սահմանված պարտականությունները,

8) սույն Պայմաններով նախատեսված այլ դեպքերում:

12.22. Ապահովագրական հատուցման տրամադրելու մերժման մասին որոշումը Ապահովադրին հաղորդվում է գրավոր՝ մերժման պատճառների հիմնավորմամբ:

13. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ ՄԱԺՈՐ)

13.1. Կողմերից ոչ մեկը պատասխանատվություն չի կրում սույն Պայմանագրից/Վկայագրից բխող պարտականություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար, եթե դա հանդիսացել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանք, մասնավորապես՝ ջրհեղեղի, հրդեհի, երկրաշարժի և այլ տարերային աղետների, ռազմական գործողությունների, քաղաքացիական պատերազմի, ցանկացած տիպի ժողովրդական հուզումների, գործադուլների, տնտեսական շրջափակման, ինչպես նաև կառավարության կողմից այնպիսի որոշումների ընդունման, որոնցով անհնարին է դառնում սահմանված պարտականությունների կատարումը:

13.2. Այն դեպքում, երբ սույն Պայմանների 13.1 կետում նշված հանգամանքներից մեկն անմիջականորեն ազդել է պարտականությունն Պայմանագրով/Վկայագրով սահմանված ժամկետում կատարելու վրա, դրա կատարումը հետաձգվում է այդ հանգամանքների ազդեցության ժամկետով: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 30 (երեսուն) օրից ավելի, Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը/Վկայագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին, և այդ դեպքում Կողմերից ոչ մեկը պատասխանատվություն չի կրում առկա և հնարավոր վնասների փոխհատուցման համար:

13.3. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը Պայմանագրից/Վկայագրից բխող պարտականությունների կատարման վրա պարտավոր է ապացուցել այն կողմը, որի պարտականությունների կատարմանը խոչընդոտում է նման ազդեցությունը:

14. ԿՐԿՆԱԿԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

14.1. Ապահովադիրը պարտավոր է Պայմանագրի/Վկայագրի կնքման պահին Ապահովագրողին գրավոր տեղեկացնել տվյալ օբյեկտի գծով այլ ապահովագրական ընկերությունների հետ կնքված ապահովագրության այն պայմանագրերի մասին, որոնք գործելու են Պայմանագրի/Վկայագրի հետ միաժամանակ, ինչպես նաև, անհապաղ, բայց ոչ ուշ քան 24 ժամվա ընթացքում Ապահովագրողին տեղեկացնել Պայմանագրի/Վկայագրի կնքումից հետո կնքվելիք ապահովագրության նույնօրինակ պայմանագրերի մասին: Տվյալ ծանուցման մեջ պետք է նշված լինի ապահովագրական ընկերության անվանումը, այդ ապահովագրական ընկերության հետ կնքված ապահովագրության պայմանագրի համարը, պայմանագրի գործողության ժամկետը, ապահովագրված ռիսկերը, ապահովագրական գումարը և չհատուցվող գումարը (ֆրանշիզան):

15. ՍՈՒԲՐՈԳԱՑԻԱ

15.1. Եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ, ապահովագրական պատահարի տեղի ունենալու արդյունքում Ապահովադրին (Շահառուին) պատճառված վնասից բխող նրա (կամ Շահառուի) պահանջի իրավունքը վնասը պատճառած անձի նկատմամբ անցնում է Ապահովագրողին՝ նրա կողմից հատուցված գումարի մասով:

15.2. Դիտավորյալ վնաս պատճառած անձի նկատմամբ պահանջի իրավունքն Ապահովագրողին անցնելը բացառող պայմանագրի պայմանն առոչինչ է:

15.3. Ապահովագրողն իրեն անցած պահանջի իրավունքն իրականացնում է Ապահովադրի (Շահառուի) և վնասների համար պատասխանատու անձի միջև հարաբերությունները կարգավորող կանոնների պահպանմամբ:

15.4. Ապահովադիրը (Շահառուն) պարտավոր է Ապահովագրողին հանձնել իր պահանջի իրավունքը հավաստող փաստաթղթերը և ձեռնարկել բոլոր գործողությունները, որոնք անհրաժեշտ են Ապահովագրողի կողմից իրեն փոխանցված պահանջի իրավունքն իրականացնելու համար:

15.5. Եթե Ապահովադիրը (Շահառուն) հրաժարվել է Ապահովագրողի կողմից հատուցված վնասների համար պատասխանատու անձի նկատմամբ պահանջի իրավունքից, կամ այդ իրավունքն իրականացնելն անհնարին է դարձել Ապահովադրի (Շահառուի) մեղքով, ապա Ապահովագրողը լրիվ կամ համապատասխան մասով ազատվում է ապահովագրական հատուցում վճարելուց և իրավունք ունի պահանջելու վերադարձնել ավելորդ վճարված հատուցման գումարը:

15.6. Եթե Ապահովադիրը կամ Շահառուն երրորդ անձանցից ստացել է պատճառված Վնասի դիմաց հատուցում, ապա Ապահովագրողը վճարում է միայն Պայմանագրի/Վկայագրի և սույն Պայմանների պայմաններով նախատեսված վճարման ենթակա գումարի և երրորդ անձանցից ստացած գումարի տարբերությունը:

16. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

16.1. Պայմանագրով/Վկայագրով ստանձնած պարտավորությունների կատարման ընթացքում առաջացած վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով: